որում են քարալծ, եղջերու (բախրա), նապաստակ, աղուէս,
գալ. թաչուններից անազին թուով Փասիան (միրհաւ) և կա-
քաւ, որի հատը քաղաքում ծախվում է 15—30 կուլէկով:

Թուրքերը բնակվում են տաք տափարակներում, մեծ մա-
սը վրանաբնակ և թափառական են. մականին բարձրանում են
խախտածամուկ կարսւաններով և նախիրազ Քիրսի և Մոաւի
լանջերը և օգոստոսին վերադաշնում են դէպի իրանց ձմերա-
նոցները. խաչնարածութիւն և ձիարածութիւնն է զիսաւոր
աղբիւր դրանց վաստակի: Արցախի հանրահռչակ նժոյգները
դրանց չնորհիւր գործիւն ունին. վաճառում են զրանք նոն-
պէս բաւականաչափ իւզ և պանիր: Այդ աստանդական թրքե-
րի մի ցեղը՝ Քօլանի կոչուած՝ սուրբում է բացաւապէս աւա-
զակութիւնով. չունին սևականութիւն և որին դիւղական մը-
շակութիւնով չեն պարապում:

Հակերը միջոց ձգտում են իրանց գաւառից դուրս բախտ
որոնել վաճառականութիւնով և նոր, ուրիշ խմացական ասպա-
րէզներում, ուստի և զաղթում են աշխարհիս ամեն ծայրերը:

Թրքերը ընդհակառակը՝ աշխատում ևն նոյն դիրքում մնալ ջանալով շատ տեղ ձեռք բերել:

Ղարաբաղի զլիսաւոր քաղաքն է Շուշի հիմնարկուած Յանահ խանից 1752 թուին. քաղաքը գտնվում է գաւառի ամենավերին ծալքում արևմտեան կողմը Քիրսի բարձրավանդակ ստորոտներում սեպացած ժայռերի զարուփու մի կողմից պարսպապատ գաղաթների վրա. քաղաքը իր դիրքով նայում է ամբողջ իր ոտների տակ սփռուած զաւառի վրա. երեսում ևն Արաքսի և Կուրի հովիտները, Կովկասեան և Պարսից լեռները. Բնակիչների թիւն է երեսուն հազար, որի կեսը հաւեր են, մենք ունինք ապատեղ 5 եկեղեցի (մէկը կուսանոց), ամենից հոգակապըն է Ղազանչեցոց թաղի ճարտարաշին նորակառոց եկեղեցին, կոփածու ամուր կրաքարից ամբողջը. Քաղաքում կաէ մի ռէալական դպրանոց (300 աշակերտով), մի թեմական հոգեսոր դպրանոց (400 աշ.) քաղաքալին արական դպրոց (500 աշկ.) քաղք. իգական դպրոց (50 աշ.) միւս օրիտորական դպրոցում կար 200 աշակերտուհի:

Այս համառօտ ընդհանուր դիտողութիւններն անելով Արցախի մասին, նրա հինգ մասերի առ անձին-առ անձին հետաքրքրական և շատ կարեւոր մանրամասն նկարագրութիւնը թողնում ենք ուրիշ ժամանակի:



Շ Ա Խ Ի Դ.



Նղրկովկասի նահանգներից տմինանշանառըն է Երեանեան նահանգը՝ բնութեան հարաստութեան կողմից, քաղաքական զիրքով՝ սահմանակից լինելով Տաճկաց և Պարսից տէրութեան, բազմամարդ քաղաքներով և աւաններով՝ աւելի շատ քան միւս նահանգներում՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր-Բագաղեղ, Հին-Նախիջնան, Օրդուբաթ, Ագուլս, Վաղարշապատ, Իզդիր և ազն, պատմական և հնագիտական անթիւ փշատակներով՝ Լշջմիածին, Արարատ, Արագս, Խոր-Ալիրապ, Արաշատ, Սևան, Գառնի, Զուղա և աշլըն և ալին, ու աւերտիների անշափ և անսահման քանակութիւն. ատածուած ամեն քալափոխում՝ Օրդուբաթից մինչեւ Ալեքսանդրապոլ, Նոր-Բագաղեղից մինչև Իզդիր, հուսկ ապաբազմահակութիւնով, որովհեան ալդ նահանգն է միան, որի բընակիչների մնացոն մասը Հայեր են, որով հայկական մի նահանգի կերպարանք է ատանում, և որ ալդ տեղ է ամենաչն Հայոց կաթողիկոսի աթոռը. Ուրեմն ակներեն է՝ թէ որչափ հարուստ նիւթ կաէ ապատեղ ուսումնասիրելու, ի՞նչ անբաւ տեղեկութիւններ կաէ հաւաքելու և զիտենալու, թէ հևտաքրիր, հարցանէր ճանապարհորդի համար և թէ հնագէտի, զիւղատնեսի, հաճասէրի, ուսումնականի ու բանասէրի համար.

Երեանեան նահանգի մակերեսութը չորս շերտի կարելի է քածանել. առաջինը տապ և ջերմագին ամենաբերրի Արագսի

հովիտը կամ Արարատեան դաշտավայրը, որ երկանութիւնով տարածվում է 300 վերստից աւելի Կողբակ սարերից մինչև Ագուլս, լաւնութիւնով 100 վերստից աւելի է: Երկրորդ շերտն լեռների ցածր ստորոտները, օրինակ Արագածոտն, Ապարան, Ծաղկոցաձոր, Գառնի, Սևանակ ափերը, Ալեքսանդրապոլի գաւառի սարահարթը. այդ ամենացածր զծում բացնում են խաղող և մի քանի տաք տեղերի պտուղներ և հետզհետէ բարձրանալով գնում է մինչև ան գիծը, ուր հաղիւ օդոսոսի վերջերին համում են դարտ և դորենի արաերը, ինտու աւելի բարձր արաներ են բացառակի, որ ծառ ծառ կամ անտառ էլ չկա՝ եղանակի ցրտութեան պատճառով, այդ էլ կըլինի երրորդ շերտը, որից դէնը մկանամ է բաւերժական ձիւնով ծածկած լեռների կառարները, որ կարելի է չորրորդ շերտ կոչել, ինչպէս է Արարատի, Արագածի, Աղմաղանի, Աղդաղի գագաթները. Երեան նահանգի մի երրորդ մասը դաշտավայր է, երկու երրորդը լեռնոտ, բամբակի և բրինձի մշակութեան բարմար է մի երրորդ մասը՝ Արաքածի հովլատը. երիտու երրորդ մասից աւելին յարմար է որթի, շերտի և հացարուսերի մշակութեան, մի երրորդ մասը արօններ են. անբեր տեղեր աննշան մասն են կազմում, Բոլոր նահանգն իր հաջակաւոր ամարանոցներով (արօններով)՝ ամրող նոր բաւաղէզի գաւառում, Արագածի և Արարատի վրա ու լանարձակ ձմելացներով (Արաքսի ափերը՝ լարմար է ընդարձակ անստանդաշութեան և կաթնատնտեսութեան):

Երեսաւ նահանգումն է Սևանակ պատմական չնաշխարհիկ լիձը, որ իր համագալ գարսմանադրու ձկներով բարօրութեան և առեսրականութեան մէծ ազդիւր է, թէպէտ տակաւին դա էլ զնու շատ կողմից, ինչպէս այդ նահանգի միաս լճական հարստութիւնները՝ մնում է լուսպէտու: Կողքաւ և Նախիջնանի հընս զարեան աղանձները դեռ ևս շատ սահմանափակ շրջանում են արտահանվում, թէպէտ իրանց գերազանցութիւնով կարող էին շատ ուրիշ աղերի հետ մրցել և վաճառուել շատ հե-

ռաւոր շուկաններում: Սևանակ շրջակակրում գտնուած քարածուի խաւերը զեռ լոս աշխարհ չեն տեսել... Բնական անտառներ այս նահանգում քիչ կան Գառնիի ձորերում և Վալոց ձորում, բայց այդ պակասը լրանում է արհեստական կամ անկովի անտառներով, որոնք սփռուած են ամբողջ Արարատեան դաշտավայրի գիւղերի շրջականներում: Այս էլ պէտք է նըկաւել, որ շատ բերքեր՝ բացի ան, որ աւանդի կլիմափի և հողի արդասաւետութեան պատճառով շատ աճող և բնդմնաւոր են, նունպէս իրանց տեսակի ընտրութիւնով շատ աւելի գերազանց են քան միւս նահանգներում: օրինակ՝ դեղին և կարմիր, անկորփիզ, մեղքածորան չամչի խաղող, սահապի, խոտոր, կարմիր, չաթալ գլուխ, գառան տմակ և այլ տեսակ խաղողներ չկան կովկասի ոչ մի գաւառում: այդ օրինակ խաղողներ կան միացն մեր տէրութեան սահմանից գորս հարաւալին երկիրներում՝ Պարսկաստանում և Տամկաստանում: Առողջապահական կողմից էլ այս նահանգը Անդրկովկասում նշանաւոր է, սրա մէծ մասը բերբի, ջրառատ լեռներ են պատուական օդով: իսկ տափարակ մասը, որ լիքն է մէծ և փոքր գիւղերով՝ չնայած տաքին, առողջարար է օդը, եթէ չկաէ ճահճներ, որոնց չորացնելով՝ փորձուած է, շատ տեղեր օդը թողել է իւր վնասակար աղղեցութիւնը: Վերջապէս այս նահանգն է ամենազեղցիկը իր բնութեան հրաշալի տեսարաններով ամրող կովկասում, բաւական լինի վիշել միան Արարատի հրաշափառ տեսքը, Արագածի և Արաքսի նազերի պատկերը, Սևանակ ճապէտ զիսթիչ ափերը, Արքիմանակար հովիտները և այն:

Այդ առաւելութիւններով հանդերձ՝ եթէ այս նահանգը ծաղկեալ գրութեան մէջ չէ՝ կան մի քանի ծանրակշիռ պատճառներ:—Երկիրը ուսումնասիրուած չէ, անճանաչ են նրա բնութեան արդիւնաբերական ուժերը և անծանօթ են նրա ժողովովի տնտեսական կարողութիւնները: Թուրքերը, մանաւանդ քիւրողեր՝ թափառական կեանք վարելով, խոս են տալիս մտաւորական աշխատութիւնից՝ մահացու համարելով այդ իրանց

համար ու չեն դադարած գող-աւազակաբարոց, սանձարձակ կեանք վարելուց, ուստի չկաչ կատարեալ ապահովութիւն։ Գիւղական դպրոցների վերին աստիճանի գդալի պակասութիւն է։ օրինակ Նոր-Բագազէդի գաւառը, որ իքն է հաչ և թուրք խիստ բազմամարդ գիւղերով, կաչ միայն մի դպրոց Զօդ թուրքի գիւղում, ուր կաչ միայն 30 աշակերտ, իսկ այդ գիւղը չորս հարիւր տուն բնակիչ ունի. Չկաչ դեռ ևս և ոչ մի մասնագիտական դպրոց աչս նահանգում՝ ոչ ազգապահութեան կամ գինեգործութեան, ոչ երկրագործական, ոչ անասնապահական կամ կաթնասնտեսական, ոչ շերամապահական և ոչ այլ։ Նահանգի զանազան մասերը ոչ մի բարմարաւոր ճանապարհով կապուած չեն կենցրոնի կամ գլխաւոր և միակ խճուղու հետ։ Սեանաւ մի վրաչ չկաչ մի կատարեալ նահանգորդակցութիւն և բնականական համար լաստեր են և մակովներ։ Տափարակում, Արաքսի հովտներում, անբաւ հողեր մնացած են խոպան՝ չուռագուած լինելով։ Նահանգի ունեոր հայերն աւելի հակուած հնա վաճառականութիւնով շահեցնելու իրանց գումարները, քան երկրի բնական հարատութիւնները մշակելով։

Այդ ամենի գէմ կարելի է մի քանի միսիթարական փաստեր վիշել, որոնք բաւադրական նշանագը, թէ շուտավ պիտի սկսի ծաղկել այդ նահանգը. օրինակ, կառավարութիւնն արդէն սկսած է ուստիմնասիրել այդ աշխարհի բնութեան հարատութիւնները և գիւղական տնակեսութիւնը. չափում են ու կարգի կանոնի ենթարկվում ընդարձակածաւալ արօտները և քննվում է տեղական անասնապահութիւնը՝ ցեղերը լաւացնելու և կաթնասնտեսութիւնը զարգացնելու համար։ Երեացել են արդէն մի երկու մասնաւոր գիւղամտեսներ և գինեգործ՝ Եւրոպացում ուսած, որոնք արդէն սկսել են գործել. լուս կաչ որ գրանց էլ կը հետեւն ուրիշները և գուցէ կը բացուին երկրագործական և անասնապահական զանազան ձիւզի վերաբերեալ դպրոցներ։ Խնդիր է լարտուցած միքանի նոր առուներ հանելու անջրդի դաշտերը ոռեղելու համար։ Արդէն վճռուած է և գուցէ

սկսած երկու նշանաւոր խճովիներ շինելու։ Մէկը Նոր-Բագազագէդից Սևանաէ հարաւ-արևմտեան ափով և Վալոց ձորով մինչեւ Հին-Նախիջևան, որով այդ քաղաքի գաւառուից և Պարսկաստանից եկողների և կարավանների համար դէպի Թիֆլուսի երկաթուղին ճանապարհը պիտի կրտուի մինչեւ հարիւր վասուն վերստ. երկրորդ խճովին Երևանից Արաքսի հովտի և աշտաղ եղած բազմաթիւ գիւղերի միջով մինչեւ Հին-Նախիջևան, Զուղա, Օրդուբաթ, Ագուլսա. Մի երրորդ լարմարաւոր ճանապարհ էլ մասղութիւն կաչ շինելու Նոր-Բագազէդի արօտները Արաքսի տափարակների հնա կապելու համար։ Թուրքերի գիւղերում աչս տարի բացուած են էլի միքանի դպրոցներ. պիտի ենթադրել, որ նոյնը կը ընելի և հայերի գիւղերում. իսկ քրտերը կամաց-կամաց զավդում են. օրինակ երկու տարի է, որ քրտերից առնվում է նշանաւոր հարկ լիոնալին արօտներից օգոտ քաղելու համար, որ առաջ նրանք չէին վճարում։ Ի վերջու կարելի է ալս էլ աւշելացնել, որ Հայր Ավիշանը, արդէն սկսել է այդ պատմական նահանգի գեղեցիկ տեսարանները և հնութիւնները պատկերացնել և հնախօսել իր՝ լուս տեսնելիք (Արարատ) խորագրով երկի մէջ՝ նման (Շիրակի) և (Ծիրակի)։

Աերիվերու վիշելով ալս նահանգի ճոխութիւնները՝ մեր նպատակն էր հազորգել ընթերցողներին հարեանցօրէն միքանի նկատութիւններ՝ Երեանեան նահանգի, Նոր-Բագազէդի գաւառուի լեռնալին արօտների միայն մի մասի և այնտեղ ամարանոց եկող, անասնապահութիւնով պարապող ժողովողների կենցաղի մասին՝ լաջորդ նամակով։





6.

ԱՐՈՏՆԵՐ

Եղամակ ծովակի շուրջը շատ քիչ
տեղէ լարմար երկրագործութեան,
Սևանը սպարփակող լոդնածործոր և
հովտաշատ բազմաթիւ սարերը և
լեռները ամառնային արօտներ են:
Արաքսի և Կուրի տափարակներից
մինչև Սևանակավերը բարձրանա-
լը՝ մի օրուակ ճանապարհ է. լիճը
գտնվում է բազմագումարտակ լո-
ների բարձրութեան վրայ, հիւսիս-
արևմուտքից՝ հարաւ-արևելք երկան ընկած մի ահազին փոսի
մէջ վեց հազար ու մի քանի հարիւր տնաշափ բարձր: Լճի
արևելեան ուղղահամեաց ապառաժոտ ափերը անբեր են. հա-
րաւային կողմը բաւական դաշտավին է. ապտեղից են սկսվում
գիւղերը, որոնք մօտ առ մօտ շարունակվում են մինչև հիւսի-
սային ափերը. այդ հողագործութեան լարմար չերտը՝ որ պա-
տում է լիճը երեք կողմից՝ ունի լանութիւն 5—15 վերաս.
Սևանակավերը մինչև կամ մասնաւութիւնը է վաթսուն վերստ, ամենալաւն տեղը
երեսուն վերստ: Լճի մէջ թափվում են չորս կողմի սարերից
շատ առուակներ, որոնց նշանաւորներից մինչև Աղիաման կամ
Ացի գետակը. ծովակի ջուրը քաղցրահամ է և միշտ պարզ.
Նրանից հնուց հանած է մի առու, որ գնում է թափվում Հը-
րազդան կամ Զանգի գետը: Սևանակավերը և հարաւային
ափերն ուղագիծ են. իսկ արևմուտք հիւսիսային եղբերը կը-
տըրառուած են և կազմում են բազմաթիւ նազելի մանրանկար
ծըցեր և հրուանդաներ: Լճի մէջ հիւսիսային կողմում՝ կամ ի

փոքրիկ կղզի, որի վրայ կան մի քանի հին վանքեր. ազտեղ
ապրում են մօտ երեսուն վարդապետներ:

Հակաղեան Գեղամ իշխանը չորս հազար տարի առաջ
տէր գառնալով աս ծովակը շրջապատող նահանգին, սկիզբը
զրաւ ազտեղի հայ աղգաբնակութեան, որ ծաղկեցաւ շատ և
հարստացաւ քաղաքներով ու շատ աւաններով. երկու հարիւր
տարի առաջ թրքերն իրանց աւերիչ արշաւանքների միջոցին՝
երբ նոր տեղեր էին փնտում իրանց ապրուստի համար՝ իս-
պառ ջարդեցին այս նահանգի համերին, քանդեցին քաղաքներ
ու աւանները, և նրանց աւերակների վրայ հաստատեցին ի-
րանց լնակութիւնը մինչև ալաօր. Սակայն այս գարու սկզբում,
այդ գիւղերից շատերը կրկին հալացան, երբ այդ կազմերից
տեղի տուաւ Պարսից իշխանութիւնը և տարածուեց Ուսաց
տիրապետութիւնը. այս ժամանակ լիշեալ գիւղերից շատերից
թուրք բնակիչները գաղթեցին Պարսկաստան. թափուր մնա-
ցած երբեմն հակական գիւղերը՝ կրկին վերաբնակուեցան հա-
կրով, որոնք եկան Տաճկաստանից, ալսամել անդրութիւն և
հանգիստ գտնելու՝ նեղուած և ծիրուած օսմանցիների կեղե-
քումներից: Այդ կրկին հալացած գիւղերն են՝ օրինակ՝ Փաշա-
քեանդ, Յըրակլու, Նոր-Բաւաղի, Ղուլ-ալի, Բաշ-քեանդ, Յա-
ղա-քեանդ, Հաթամ-խան, Վալի-աղալու (հնումը Չորազեղ),
Դնու, Վւրին և Ներքին Աղիաման, Վերին և Ներքին Պարան-
ուխ, Ալիզուխ, Գեօլանի-Ղուլան, Զօլա-խաչ, Կոխ-Յոււախ, Զա-
ղալու, Բասար-քեչար և ալլ շատերը. դրանց հին անունները
լայնուի չեն: Նոր եկուոր հակերը դասն իրանց աղգակից պա-
տեղի աշխարհը տակն ու վրակ արած, եկեղեցիները կործանած
և նրանց գերեզմանները պղծած: Իսկ այն հին հակական գիւ-
ղերը, որոնք մինչև հիմա թրքաբնակ են մնացած՝ օրինակի
համար են. Հաջի-Մուխան, Ղըրլ-խարաբա, Ալրի-վանք, Ղըր-
վանք, Թաշ-քեանդ, Սարի-հակուր, Շիշ-կահեալ, Զօղ, Մազրա,
Ալուչալու, Շօրժակ և ալին, Ակտ բոլոր թրքաբնակ գիւղերում
մնում են կրտականդուն Հալոց հուկապ տաճարները և գիրեղ-

ժանատներն ու անթիւ խաչքարերը, ԱզըլՎաճք գիւղի եկեղեցին, որ է հին դարերում հռչակաւոր Մագինեաց վաճքը, ձեռք է բերել մի վարդապետ՝ բաւական նորոգել է և ահա ութ տարի է պահպանում է, միանակ տաղրելով թուրքերի մէջ. իսկ Զօդ գիւղի գերմանացին եկեղեցին պահպանում է մի թուրք՝ քելքալափ՝ վարձատրութիւն հաւաքելով հայ ուխտաւորներից և ճանապարհորդներից. նա մտադիր է դիմելու Ս. Եջմիածին, որ իրան ուստի նշանակին, որ պահպանում է մի հայկական հնութիւն և մի քրիստոնէական տաճար, Թրքաբնակ Արքի-Վաճք գիւղում կան երկու գեղեցիկ եկեղեցիներ՝ կառուցած մի երկար հրուանդանի ծալքին, որոնց պատերին են բաղավում լճակի վիտ ալիքները. Նրանք շատ չնշին վնաս են կրած ժամանակների ընթացքում և իրանց ծովահանաց գիրքով մի զմաւելի պատկեր են կազմում: Շատ երկար կը լինէր, եթէ մէկ-մէկ վշշի թրքերի գիւղերում գտնուած հայկական հնութիւնները, Ազատ քաղաքի մնացորդները, կարվանսարանները և ավճ և այս: Վերը լիշտ հայ և թուրք գիւղերում կան նոցնպէս մնձ գերեզմանատներ, որոնց մի քանիսի մէջ կան առանձին դամբարաններ, տապանաքարերը գեղագանդակ խաչքարեր են, միծ արաստոկ վէմերի վրայ կանգնեցրած. գրանց թիւը ամբողջ գաւառում հասնում է մի քանի հազարների, չհաշուած այն՝ որ դարերով դրանց՝ թուրքերը գործ են ածել և շարունակում են քանացնել իրանց տների շինութեան համար: Խաչքարերը գըտընվում են սահմանավուներում, բարձր սարերի վրայ, ճանապարհների երկարութիւնով զանազան կէտերում և ավճ: Ազ անթիւ խաչքարերից ամենանշանաւորն է Զօդա-խաչ (միծ կամ երկար խաչ) գիւղի հռչակաւոր հսկա խաչքարը, որ միապալաղ վէմ է երկու սաժէն բարձրութիւնով, մի սաժէն լաճութիւնով, արշնուկէս հաստատիւնով, ամբողջապէս զարդարուած քանդակներով և արձանացած նոցնպէս միապաղապ վիթխարի պատուանդանի վրայ: Ազ խաչքարիցն է և գիւղը ստացել իր անունը: Առաւել ուշաղրութիւն են գրանցում խաչքարերից ա-

շելի հնագոյն քառաձև տապանաքարերը, որոնց վրայ չկայ ոչ խաչի նշան, ոչ գիր. այլ քանդակուած են զանազան պատկերներ, որոնք ներկաւացնում են ան ժամանակուաց հաւերի կեանքը, օրինակ այդ պատկերների վրայ տղամարդիկ կրում են սաղաւարտներ բաշով, նետ և աղեղ, վահան նիզակ. ազտեղ զուրա ևն բերուած զանազան հանդէսներ, ընտանեկան պատկերներ, անօթներ, գործիքներ, շինութիւնների ձևեր, ալլեգօրական պատկերներ և ավճ և ավճ. ալդանդ դուրս բերած կանանց գլխի զարդերը մի տարօրինակ տարավի են: Ազդ քանդակները ի հարկէ կոպիտ ևն տեսաց Մագինեաց Վաճքի գեղեցիկ ճաշակաւորները. օրինակ ես տեսաց Մագինեաց Վաճքի դռան ճակատին՝ ներսի կողմից՝ մի մեծ քարի վրայ մի կատաղարար վազող ձիու պատկեր, որը անքան ճարտարագեղ քանդակ էր, որ կարելի էր մտածել թէ հիմ Ատտիկէի Աթէնքից էր գողցուած ալդանդ դրած: Եթէ ամբողջ գաւառում գլուխուած այդ անթիւ տապանաքարերի վրայի պատկերներից գոնէ մի երկու հազարը զանազան տեսակի ուսումնականութիւնն և օրինակները հանուէին՝ կարելի էր մոտաւորապէս շատ հին դարերի հաւերի կւանքը իմանալ: Մի քանի գերեզմանոցներում կան քարէ ձիարձաններ բնական մեծութիւնով միակտոր, որոնցից երկուսը կան կանգուն մինչև հիմա, մէկը ալրի (Արքիջա) գետի ափին, Արգուլ-հասարի ստորոտում, միւալ Զազալու գիւղի մօտ մի բլուրի վրայ: Արգուլ-հասարը մի հրաբղիսին գմբեթածեն սար է 9300 ստեղծակի բարձրութիւնով Սևանի հարաւային կողմը. դրա զաղաթի վրայ կաէ մի մեծ փոս, որ է հանգած հրաբղիսի բերանը. այդ փոսի մէջ գուացել է ալժմ մի գեղեցիկ լճակ՝ կանաչ ափերով, որոնց վրայ կան մի քանի միջիններ, դրանցից մէկը գետնափոր է և խորանաջարկ, ուրուխտի են բարձրանում անամնապահ ժողովուրդները, ոչխարի հիւանդատթեան ժամանակը: Ազդ լիուան գէմուգէմ Դիտ-Վաճքի սարի գլխին նոցնպէս կան շիրիմներ և առերակներ, որոնց ես միան գիտակով նաևեցի, ան օրը ցուրտ լինելու պատճառով երկիւղավի էր բարձրանալ:

Աղղաղի մօտի բարձրութիւններում՝ մի սուր սարաւանդի կողի վրա կանգնած կան երկու բնական մեծութիւնով մարդու քարե արձաններ. որոնք երևում է՝ կռապաշտութեան դարերում ազդեղ արօտների շահապետ—պաշտպաններն են եղած։ Դրանցից քիչ հեռու Աղղաղի վճաշատ կատարների մօտ՝ մի հին անշուք զերեզմանոցում կան երկու ահապին զլանածե զերանների նման երկար ընկած՝ անշուշտ զերեզմանաքարեր՝ 5 արշին երկարութիւնով, որոնց վրան կան զանազան նշանազրեր. այդ հսկայ վէմարձաններից մինը՝ մի քուրդ աղա կանգնեցրել է իր վրանի մօտ. Նրա տակին ձգում է մի փոքրիկ գորդ և ախտեղ «նամազ»—աղօթք է անում։

Արդ, Սկանի շրջապատն է միան կազմում գրեթէ ամբողջ Նոր-Բախազէղի գաւառը, որի տարածութեան ամենամեծ մասը, այն է հարիւր քսան հազար օրավարը (դեսետին) է ամառնային արօտներ, որից օգտվում են ոչ միան տեղակին բնակիչները, որոնց գլխաւոր պարապմունքն է խաչնարածութիւն և տաւարաբուժութիւն, ալև Երեանի, Գանձակի՝ մասսամբ Թիֆլիզի և Բագուատ նահանգների անասնապահները. Այդ մեծաքանակ արօտներն իրանց խոտի պատուականութիւնով և ջրառ աստութիւնով առաջին տեղն են գրաւում Կովկասիան արօտատեղերում, ուստի և Կառավարութիւնը ամենից շուտ իր ուշադրութիւնը գրաձեց դրանց վրաէ չափելու, ուսումնասիրելու և կարգի բերելու համար. Ամառնային և ձմեռնային արօտների տարածութիւնն է ամբողջ Կովկասում չորս ու կէս միլիոն օրավար։



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՅԻ



Բկրագործ ժողովրդի գոլութեան հիմքն է վարելանողը. անասնապահութեան համար էլ համազօր նշանակութիւն ունին արօտատեղերը, բագուատ նահանգի զանազան կողմերից, օրինակ Զաւաթի գաւառից, հեռաւոր Պարսկացն սահմաններից՝ Մողանի լաճատարած դաշտավարից՝ ամբողջ մի ամիս չամրաքաղը ուղևորութիւնով՝ գալիս են անասնապահ ժողովուրդները Հին Գեղարքունիքի—Նոր-Բախազէղի լեռների արօտները՝ իրանց կենդանիները՝ Երկու-երեք ամիս այդ հովտասուն խոտաշատ վայերում բուժանելու համար. ապա մօտ մի ամիս կրկին ճանապարհորդելով վերադառնում են իրանց Ճմերոցները. Այդ դեռ բաւական չէ. նոյն իսկ արտասահմանից՝ Տաճկաստանից՝ տեղական անասնապահները սահմանակից ուռուսանպատակ քրողերի հովութիւնով, վերջիններիս որոշ վարձատրութիւն տալով՝ ուղարկում են իրանց մեծաքանակ նախիրները՝ Գեղարքունիքի—Սևանայ շրջակայ արօտներում արածելու ամառային երեք ամիսն. Արդ, երբ մենք աշխատում ենք ճանաչել վաճառաշահ հարուստ քաղաքները և լի ու բերրի երկրագործ գիւղերը, որոնց շրջապատող զեղանկար ընդարձակ արտերը և մեծ ալիքները տալիս են մեղ ճերմակ հաց, ընտիր զինի և անոց միրգ, նոյնպէս պիտի ծանօթանք այն բարձր, միայն խոտով ծածկուած լեռների արօտներին, որոնց շնորհիւ մենք սատանում ենք ուտելու միս և իւղ, որ հիմնական և մշտական սնունդն են մարդուս համար հացից և զինուց լետու, ալև նրանք մեղ տալիս են պանիր, կաթ

մածուն, սէր ու հագնելիքի համար փափուկ բուրդ, տաք մորթի և պիրկ կաշ:

Կան ժողովուրդներ, որոնք բացառապէս պարապում են անասնապահութիւնով, այդպէս են բոլոր քրդերը, որոնք վարու ցանքի վրաց ոչինչ գաղափար չունին. նոյնպէս թուրքերի մի բաւական մասը անասնպահ է, երկրագործութիւն չունին. այդ տեսակ հացեր չկան ոչ մի տեղ. հաւերը բացառապէս հողագործ են, այդ բառի ընդարձակ նշանակութիւնով. անսամնա, պահութիւնը նրանց համար անծանօթ բան չէ, առկան այդ պարապմոնքը նրանց տնտեսութեան մէջ երկրորդական տեղն ունի և այդ մասի մէջ հացերը շատ իւտ են մնացած քրդերից և թուրքերից ու չունին դրանց շափ հմտութիւն և փորձառութիւն անասնապահութեան մէջ. Եթէ դուք կամնում էք լաւ ընտիր ցեղական (ջինս) կրթուած ձի, երխար, նժողով, կով, եղ, գոմէչ, ոչխար ունենալ՝ պիտի գիմէք թուրքերին և քրդերին. Եթէ ուզում էք ձեր ապրանքը ջորիների և ուզտերի կարագաններով ճանապարհել՝ դիմեցէք միան թուրքերին. Եթէ ցանկանում էք պատուական և զմակելի զանազան տեսակի կապերաներ և այն՝ դիմեցէք թուրք և քուրդ կանանց ճեռագործներին. Մեր երկրում վաճառահանվող իւղն ու պաճիրը գրեթէ զլսովին թրքարնակ և քրդական արդիւնաբերութիւն են. այսպէս է հացերի վիճակը ամբողջ անդրկառասում անասնապահութեան մէջ. Քրդերը՝ կարելի է ասել, բացառապէս խաշնարած են, գրեթէ միան ոչխարապահութիւնով են ապրում. այդ մասի մէջ նրանք վարժ են և հ ամրաւ ունին. այդ է նրանց տոհմական պարապմոնքը. թէպէտ կան որոշ քրդական ցեղի պատուական եղ, կով, լաւ մարզուած ձի, բայց դրանցով քրդերը վրաղուած են անքան, որ իրանց առանին հարկաւորութիւնները լցուցանեն. Թուրքերը ոչխարաբուծութեան մէջ քրդերի հետ մրցել կարողանալոց զատ՝ առաջին տեղն են որոնում տաւարապահութեան մէջ. ձիատածութեան և ուզտապահութեան մէջ նրանք

ախովեան չունին իրանց դէմ. թուրքերը վերջապէս կարող են համարձակ մենավաճառ համարութիւն իւղուր կենդանիների առևտում. Հիմա դժուար չէ հասկանալ, որ վիշած Գեղարքունիքի—Նոր Բայազէդի անուանի մեծատարած արօտները՝ համարեա ամբողջապէս թուրքերի և քրդերի ձեռքի տակն է. ուստի այդ արօտների մասին խօսելիս՝ չի կարելի նախ չփշել և մի փոքր ծանօթանալ թուրքերին և քրդերին և ապա անցնել հաւէրին, որ է նամակիս բուն նպատակը:

Անասնապահ թուրքերը, որոնք երկրագործութիւնով չեն պարապում, կոչվում են էլուս, այսինքն թափառական կեանք վարող, այդպէս են և բոլոր քրդերը. Դրանց մի մասը ամբողջ տարին վրանների մէջ է ապրում, որովհետեւ հաստատ ձմերոցներ չունին, այլ առնեն մի տարի ստիպուած են ձմեռալին տեղիր կապալով վեր առնել զանազան կալուածատէրերից. Խակ որոնք որ ընդ միշտ ստացած ունին ձմերոցներ, ուր ամն տարի նրանք անց են կացնում հոկտեմբեր, գեկտեմբեր, լունուար, փետերուար ամիսները՝ շնած ունին հաստատ բնակութիւններ—ոներ, գոմեր. Որանք էլ ասկում են թաղթա-դափի— ալսինքն անպիտի աների մէջ ապրող, որոնք ունին գոներ, փալտէ, տախտակէ դոներ. Շարուրի մնած զաշտում, Արաքսի հզերում ապրող քրդերը և անասնաբոյջ թուրքերը ամենքը ձմեռը ապրում են տներում, որոնք գիւղի կերպարանք և անուններ ունին, օրինակ. Սարաչու, Քեարիմբալու, Բօրլան, և ազն և ազն. կան թուրքի գիւղեր, որոնց կէսը հողագործանապահ են, իսկ կէսը միան անասնապահ. Օրինակ Սարդարակ, Օրթլու-Փաղաքենդ, Զէջվա, և ազն և ազն.

Չմերանոց տեղերին թուրքերէն ասում են Ղջաղ կամ Արան. ձմերը իւղուր անաստներն՝ կով, եղ, ձի՝ պահում են աներին կից գոմերում կամ գետնափոր պատսպարաններում, որ ասում է զագմա. Խակ մանր կենդանիներին պահում են մարդիկների բնակութեան տեղից տարական՝ հէնց նոյն խակ ձմեռալին արօտատէղում. պահապահում են նրանց հովիւները,

ոչխարների լատուկ ձմեռատեղին կոչվում է եաթաղ կամ աղալ եաթաղ նշանակում է հանգչելու տեղ, իսկ աղալ նշանակում է պատուպարելու տեղ: Նաև եաթաղներում ու աղալներում շինուած են որջերի պէս գտներ, կամ փարախներ, ուր անց են կացնում զիշերները ու պինդ ցուրտերին հովիները իրանց հօտերով. այդ գետնատները կոչվում են սրիսանա, իսկ Սուզանում շատերը միան մի որևէ տեղ պատում են եղեղնից զործած ցանկապատվ, ուր բացօքեաչ լոկ ցուրտ քամուց միահաւաք պաշտպանվում են հօտերը. այդ եղեղնոցներն էլ կոչվում են քարասխա:

Անասնապահ ժողովրդներից նրանք, որոնք ունին արքունական ձմերապին արօտառեղեր, վճարում են գանձարանին օրավարին 10 կոպ. իսկ որոնք վարձում են մասնաւոր կալուածատէրերից՝ տալիս են ոչխարազլուխ 5-ից մինչև 50 կոպէկ:

Յածր դաշտավայր ձմերոցներում, երբ եղանակը սկսում է տաքանալ ու տափարակները սկսում են ծածկուլ նոր խոտի կանաչ ծիլերով ու ծաղկիների բաղրոջներով, այն ժամանակ անասնապահ ժողովուրդները վեր են առնում իրենց վրանները, բոլոր ունեցած-չունեցածները, խոչոր անասունները, զուրս են դալիս ձմերապին խրճիթներից ու գնում են երթեմն իրանց գիւղերից բաւական հեռու գտնուող ոչխարների փարախառեղին—եաթաղ կամ աղալը. այդ տեղ մի ամիս կամ ամսուկէս մնալով սկսում են կամաց բարձրանալ դէպի սարերը: Փարախառեղիրում մաքի ոչխարները փետրուարի վերջին, մարտի սկիզբին ձնուում են իրենց գառները, և մինչև լեռները գնալու միջոցին հասնելը բաւական մնանում և ուժովանում են այդ վերջինները:

Ապրիլի առաջին թուերից անասնապահները իրանց ընտանիքի բոլոր անդամներով, հօտերով և նախիրներով հետները առած իրանց բոլոր կարողութիւնը՝ խումբերով, խախտարեա կարւաններով հետզետէ բարձրանում են դէպի լեռնապին ամարանոցները, որ թուքիրէն ասլում է եալաղ: Սարը գնացող խումբերը կամ կարւանները ասլում են էլ կամ քօ: Երկ-

րապորկ թուրք անասնապահների ընտանիքի միան մի քանի անդամն է գնում սար, միացեալները մնում են ցանքսերի ու ազգիների հոգսը քաշելու, դրանք սարն են տանում տնալին կամ կահարասիքից ազգան միան, որքան անհրաժեշտ է ամարանոցում:

Սարը գնալիս ունետքները ամենալաւ ձիերը զարդարում են, որոնց վրա է նստում են իրենց ամին պճրանքներով ծածկուած մանկամարդ հարսները և աղջիկները. բեռնակիր ուղտերին էլ զարդարում են զանդուլակներով և երփներանգ փենջերով և ուղոնքներով: Նախած ձմերոցից մինչև ամարանոց եղած տարածութեան՝ այդ ճամպորդութիւնը տեսում է մէկ օրից մինչև մի ամիս: Լեռներում ամբողջ մի գիւղի համանք միասին կամ 5, 10, 20, տուն միասին ունին վեր առած որոշ արօտառեղի, որ ասլում է իւրտ, ամեն իւրտ լատուկ անուն ունի. ամառնապին արքունական արօտառեղի իւրաքանչիւր օրավարի համար գանձարանին տալիս են հարկ 15 կոպէկ: Ամեն արօտառեղում-իւրտում՝ եղած մի խումբ վրանները ասլում է օրա, իսկ Նոր-Բակազէդի համերը ասում են զօտ կամ զօմա: Ամենից առաջ Նեղարքունիքի լեռներն են գուրս զալիս քրդերը, որոնք մի ամսաչափ արածացնում են իրենց հօտերն ու նախիրները համերի ու թուքերի արօտներում, մինչև սորանց զալը, որ գալիս են ուշ, մայմափ վերջին, լունիսի սկզբին: Ապա սկսում են նրանք (քրդերը) անցնել իրանց արօտառեղերի ստորին և հետզետէ ձինի քաշուելը բարձրանում են մինչև ամենաբարձր լեռների գլուխները, ուրանուից օգոստոսի հէսին կամաց-կամաց իջնում են: Քրդերն ասում են. «Բարձր լեռների կատարները գանգասի ելան Աստծու առաջ և ասացին, գուհովաներն ու գաշտերը լցրիր մարդիկներով, իսկ մենք մնացինք անտեր: Ան ժամանակ Աստծուած սարերի գաղթերի աղերսը լսելով՝ նրանց համար էլ ստեղծեց քրդերին»:



Է.

ՄՆԱՅՑՈՐԴՆԵՐ

նացորդներն են աչժմու հակեբը՝ մի արտէն վա-
ղուց քակագուած ամբողջութիւնից. հիմա կան
միան նրա մասունքները, նշխարները: Եւ ուր չէ
ցրուել նրանց կասաղի՝ անազորոց մրբիկը:

Սեանաւ շուրջը—Գեղարքունիքում, աւսինքն Նոր-Բայա-
զէդի գաւառում, ափուուած հայազգի մնացորդները՝ բազմաթիւ
մեծ-մեծ հակական գիւղերի մէջ, որոնցից մէկը՝ Նոր-Բայազէդը,
որին տեղացիները լորջորջում են Գաւառ, 25 տարուց ի վեր
վերակոչուած է քաղաք՝ իր 1500 տուն բացառապէս հայ բնա-
կիչներով,—գտնվում են վերին աստիճանի անմիջաթար դրո-
թեան մէջ մտաւոր կողմից. սրովնեան ազդ մի քանի բիւր հա-
գերը ունին միան մի գպրոց Նոր-Բայազէդում 100 աշակերտ-
ներով. ազդ կենարօնավայրում չի նստում գոնէ մի լուսաւոր
վարդապետ որ շրջէր և իր քարոզութիւնով ազդ տնօղի խսպա-
խաւար ժողովրդն հասկացնէր ուսման կարեւորութիւնը: Եւ ազդ
մոռացուած բազմահայ, ամենատղէա գաւառը էջմիածնի.. թե-
մունի է:

Նոր-Բայազէդը գանգում է Սեանաւ արևմտակողմը ծովեղ-
րից 6 վերսա հեռու մի նեղ հովակում Գաւառ անոնոյ գեափ
ափին. աները կաւաշն են խառն հրաբուխացին կարմիր ու սե-
քարերով, տափակ կտուքներով. կան շատ երկարկանի վաճե-
չակերտ տներ. երկու հայոց եկեղեցի, մէկը հին, տձեւ և կաւա-
շն, միւրը նոր, քարաշէն. մի հասարակաց շտմարան, մի նո-
րասունկ պարտէզ, կառավարչական արական գպրոց 60 աշա-
կերուներով և կիւղեցական երկուու Հայոց գպրոցներ 120 տղակ,
աղջիկ. մի փոքրիկ գրատուն ընթերցարանով: Գեափ վրաց կա-
ռուցուած է մի նոր գեղեցիկ մեծ կամուրջ և մի մեծ օրինա-

կելի ջրաղաց, ուր բանում են մի քանի երկանաքարեր միաժա-
մանակ: Քաղաքի օղը բարձր լեռնային առողջարար է, իսկ
ջրերը «անմահական»: Քաղաքի շուրջը կան շատ հնութիւններ,
աւերակներ, ացբեղ մի բարձր գիրք ունեցող տեղ, փոքրիկ
սարահարթ՝ կոչվում է «Խաչերի դար»: վասն զի լիքն է վի-
մարձան կանգուն խաչքարերով. դրա մօտ կան պատուական
աղբիւրներ, բանջարանցներ, հովանաւորուած բարդի և ուսի
ծառերով. «Խաչերի դարն» է ժողովրդի առաջին զրօսաւեղին:

Քաղաքի չորս կողմքը և շատ տների բակերում գտնվում
են կալեր, մարտափներ. կանգնած են խոտի, կտաւատի և հացա-
բուսերի գէղեր. ամեն դաւթում կան կուի ահապին կանոնաւոր
գարսած կողմեր, որոնց անցացիները անուանում են ամրոց
խկ կուին՝ ցան. պատրաստած, կտրտած ու գիղած կուի կտոր-
ները ասվում է փթիր, խկ անպէս ընկած չորացած կուի կը-
տորները ասվում է զարթ. աչ կողմերում առնասարակ կերա-
կուը եփում են և հացը թխում ցանով վառած թոնիրներում.
գործ են ածվում կաւից շինած կաթսաներ, որոնք կոչվում են
պտուկ, աւելի խոչորները՝ կծուծ. հաւերի գործածած խնոցիներն
էլ մեծ մասամբ կաւից են, սակաւ փափոխ. թուրքերը բացա-
ռապէս փափոխ խնոցիներ են բանեցնում, խկ քրգերը զիմա-
ւարապէս՝ կաշիից շինած տկաձեւ խնոցիներ: Քաղաքը՝ ի բաց
առած ունուրների լարմարանոր աները՝ թէ արտաքին կենցա-
զավարութիւնով նման է շրջակայ հաչ գիւղերին. խկ հակա-
կան գիւղերը զանազանվում են թուրքերի գիւղերից նրանով
որ աւելի լաւ տներ ունին և գիւղերին կից կան բանջարանոց-
ներ և ծառեր: Ազդ բանջարանոցներում հայերը ցանում են
տնապին պիտուքի համար բողկ, բաղուկ, զետնախնձոր, կա-
զամբ, մի քանի ալլ կանչչներ և կանեփ. կանեփի սերմերից
(հատիկներից) հանում են ձէթ, իսկ ձնուից՝ հիւսում են թո-
կեր: Բանջարանոցներին կից կան փոքրիկ ծառասաններ, բաղ-
կացած զիմաւրապէս ուռենիներից. Ատաղծի փափում են
աչ կողմերը դիլիջանի և Արցախի խօթակ Վանքի կամ Տաք-

ջուրի անտառներից: Նոր-Բայազէգը կատվում է 30 վերստ հասարակ կառքի ուղիով Երևանից մինչ Երկաթուղու Աղստավան կացարանը գնացող խճուղի մեծ ճանապարհի հետ արևելքան կողմից Ելենօվկալ ռուս աւանի փոստավճն իշխանում:

Գեղարքունիքի համերի լեզուն մաքուր է՝ նման Արարատեան բարբառին, այլ և ունի իր մէջ լոդնաթիւ շատ հին բառեր և ոներ, որոնց մենք կարծում ենք ավեմ իրը թէ միանց գրաբառում կարելի է գործ ածել. օրինակ՝ զէնել, բարելից, մսուր, նախրորդ, լուշիկ, նախիր, զար, արօս, կոն, ծաղրերես և ազն և ազն, էզ ոչխարին ասում են ստերճ. ստերճը երբ առաջին անգամ ծնում է զառը՝ կոչվում է մաքի. արու. երկու տարեկան ոչխարին ասում են կաւր կամ շիշակ. կրտած ոչխարին ասում են հողաճ. հորթը երկու տարեկան լինելուց լիսուն կոչվում է երինջ, եթէ էզ է, իսկ եթէ արու է՝ արջառ և ազն:

Ազ լեռներում ման զալիս՝ ևս խնդրում էի, անթիւ ծաղիկները և խոսերը ցուց տալով, որ նրանց անուններն ինձ ասէին. ահա ձեռատեսարիցս առաջ եմ բերում մի քանիսը տեղացիների ասած բոլսերի անունները: Երեքուկ, վալրի կտաւառ, աղբրան-արիւն. ործ-խոտ, ցորնուկ-խոտ, սեռիկ (խոտ է), կապուտ ծաղիկ, կակաճ, հազար-զարուն, զազ, սղոցիկ, ուրծ, վալրի սոխ, ալի, գելաբոխ, օշինդր, կապտախստ, ճաճիկ, պիժանիկ, սաւլուկ, շմրնիփուկ, եղան լիզու, ողորմակոթ, թուփիխոտ, կոնձ-օձ, թորթոսիկ, ասաղ-փուշ, գեղաւեր-փուշ, եղբնջ, եղջրիկ, սուտ համեմ, ցնկան ծաղիկ, լողակի ծաղիկ, մոռ ծաղիկ, սանդալ, մանդակ, վարդէնիս, աղշպանք, շաղկմուկ, կաթնով փուշ, կաշ, սիրեխ, ճնճղապաշար, հացուպանիր, տէրողորմիկ, և ազն և ազն:

Նոր-Բայազէգը մի բացառութիւն է կազմում մեր երկրում. ազ քաղաքն ունի 12,000 օրավար քաղաքապատկան վարելանող, որ մշակում են նոյն իսկ քաղաքացիները. քաղաքում հաշուում են աւելի քան 15,000 զիստի խոշոր անստուն, բացի ոչ-

խարի հօտերը. քաղաքում կան աճապիսի համեր, որոնք ունին 500—600 միան կթի ոչխար, բացի գառները, շիշակները և ազն. տուն չկամ, որ չունենաւ գոնէ 20—40 կթի ոչխար, մի քանի կով, մի երկու զուգ բանուր եղ, զոմէշ և ազն:

Քաղաքը ունի նմանապէս երեք անապին արօտատեղի սարերում ամառուաց համար, որոնցից մինը քաղաքավին է, խակ երկուաը կապալով վերցրած. այս ամառ հասարակաց արօտում բացի միւս մանը ու խոշոր կենդանիներից՝ կալին արածող աւելի քան 800 միան ձիեր, չհաշուած միւս երկու արօտներում և քաղաքում եղածը ու ան հօտերն ու նախիրները, որոնց քաղաքի անասնապահները, տեղ չինելու պատճառով, ցրւում են ամբողջ գաւառի համերի մանաւանդ քրդերի արօտներում վարձով արածացնելու համար: Ազի ապրիլին շրջակաւ գիւղերի բնակիչները զալիս են քաղաքացիների կոմիտի մի մասը տանում են ամառը պահելու և ամբողջ 5 ամիս պահելուց տալիս են կովասիրոջ 2 լիտր (24 ֆ.) իւզ:

Քաղաքի աները վերջանալուց սկսվում են արտերը—վարելանողները, որոնք շուրջ տարածվում են մինչև 10—12 վերստ հեռու. արևմտեան կողմից, վարելանողների գծից լիտոյ, սկսվում են լիոնապին արօտները, որոնք գարիսեր բարձրանում են դէպի բարձր սարերը. համերի արօտները վերջանալուց աւելի բարձր սկսվում է քրդերի և թուրքերի արօտատեղը. ամբողջ գաւառում համերի արօտները կից են իրանց վարելանողներին:

Մայիսին քաղաքացիներն էլ գիւղացիների պէս առած հօտերը և նախիրները աարն են բարձրանում, ի հարկէ ոչ գըլխովին, ազ որչափ անձ հարկաւոր է անասունների մըա հըսկելու և կաթից իւզ, պանիր, պատրաստելու համար: Հակերը իրանց բոլոր կեանքը հողագործութեան նուիրած լինելով, իրանց հօտերի պահապանութիւնը բացառապէս լանձնած են քուրդ հովիւներին. այս գաւառում հայ հովիւներ չկան: Կան ուրիշ պատճառներ էլ՝ որ համերը քուրդ հովիւներ են պահում. քրդերը կատարեալ հմուտ են խաչնարածութեան. չարքաշ են

վերջն աստիճանի, սրտուտ են և քաջ հօտը պաշտպանելու գաղաճների և աւազակների դէմ: Քուրդ հովիւը իր ընտանիքի հետ միասին ստանում է հաւերից ապրուստ. 20 ոչխարից մի ոչխար. մի թաղիք վերաբկուր համար, բաւական բաժին խուզած բրդից. մի-երկու վար իւզ, պանիր, տրեխներ մի քանի զոգ, շապկացու, իր ունեցած անստուններն էլ անվարձ արածացնում է հաւերի արօտներում. թուրքերը և քրդերը իրանց հովիւներին դրա քառորդը հազիւ են տալիս: Հաւերից վնում են միան նախորդներ, գառնարածներ և այլն:

Հողագործութեան բերքն է այս գաւառում ցորեն և գարի, կտաւատ և ձաւար. ցորենի առաստութեան կողմից Անդրկովկասի մի նշանաւոր շտեմարանն է համարվում Գեղարքունիքը. ցորենը կազմում է նրա արտաքին առևտրի մի զիմանոր ճիւզը կտաւատից պատրաստում են ձիթ, ուտելու և գիւղերում ճրագալուսի համար, ուր տակաւին նաւթի գործածութիւնը չի մըտել, նոյնպէս և արտահանելու համար: Զաւարը ցանվում է զիշաւորապէս տնավին պաշարեղէնի համար. ձաւարը ցորենի մի տեսակն է, ցորնի նման, կարմրոքակ, բարակ և երկար, վտիտ ձեռվ. համով շատ անուշ է, նրանից ուտիսուակ և պատուակ քաշովի ու փլաւ են եփում և համարեա բրինձի տեղ է բռնում այդ կողմէներում. *)

Սևանաւ լճի ձկնորսութիւնը և նրա առևտուրը բացառապէս նոր-Բայազէղցիների և շրջակա հայ գիւղերի ձեռին է, նոյնպէս և լճի վրայ լաստապանութիւնը. թուրք գիւղացիները թէ առաջինով և թէ երկրորդով չեն պարագում և ձուկ սակաւ են ուտում. հաւերը բացի բաւականաչափ դրամական շահը որ ստանում են ձկնավաճառութիւնից, նոյնպէս վերին աստիճանի ձկնակեր են. բոլոր տարին թարմ և աղած ձուկը անպակաս է նրանց տանից, թէ նախաճաշիկին, և թէ ձաշին և ընթրիքին:

*) Ուրիշ անդերում այդ ձաւարին ասում են «աճար», իսկ ձաւար՝ ասում են ցորենից կամ աճարից աղացած կորիստին:

Կանոնաւոր ձկնորսութիւնը սկսվում է սեպտեմբերի 15-ից և տևում է մինչև գարոնքի վերջը. Յոնւող ձկներն են՝ իշխան, գեղարքունի, կարմրախաչ, կողակ, բախտակ, բեղասոր և ազնութեացի լճից ձկնորսութիւնը լինում է և գետաբերաններում մեծ չաղողութիւնով. այս վերջիններում գետը բաժանելով առուների, կապում են ջրի բերանը քարով և տիղմով, ասպա քիչ ժամանակից գետի ընթացքը լշելով, նրա սակաւաջուր հուներից ոչ թէ որպում են, այլ ուղղակի գրկալից հաւաքում են ձուկը և լցնում կողովները:

Վերը վիշած մի քանի ակնարկներից գժուար չէ հետեցնել որ Նոր-Բայազէղը անասնավաճառութեան, ոչխարի, ցորենի և ձուկի վաճառականութեան կեղրոն է, և թէ այդ բերքերով ամբողջ գտաւուը թաթաղուն-գեղուն բարելից է. ուրեմն կարելի էր ենթարկել որ վայելուչ կեանք և մտաւոր ու տնտեսական չառաջադիմութիւն պիտի ունենար այդ տեղի ժողովուրդը. սական ընդհակառակն աստեղ ժողովուրդը անշարժ մի կէտի վրայ կանգնած է. ոչինչ մտածութիւն և հոգ իրանց զիւղատնտեսութիւնը զարգացնելու կամ հոգեր և մտաւոր կատարելութեան, անբան կեանք, մինչև անկամ բարուապէս էլ վիշացած, անընկճելի տգիտութիւն և խաւար՝ թագաւորում են ամբողջ գտաւուում:

Նոր-Բայազէղ գտաւոի նշանաւոր մեծ հայ գիւղերն հնորոնց արդէն մի անգամ լիշեցինք. Ծաղկունք, Յամարաքերդ, Օր, դակու, Փաշաքենդ—քաղաքին մօս՝ նշանաւոր հնաղարեան և կեղացիով անսխն և թագածն զմբէթով. Յաշ-քենդ—կէսը հայ, կէսը թուրք, մօտը մի սարի վրայ կանգուն մնացած վաճքեր. Հաթաշ Խան—հնութիւններ, բենեաւդիր արձանագրեր. Զորադեղ մի գեղեցիկ ձորում, երեք հին եկեղեցիների սրտածմլիկ աւելակներով. Թաղսքենդ—հարուստ մեծ գիւղ—մօտը մի կանգուն չին և կեղեցի գեղեցկաշէն. Գեօլ—ծովափեակ գեղեցիկ զիւրով. Աղիաման վերին և Աղիաման ներքին—ուր կան շատ խաչքարեր հնութիւններ և մի վիթխարի բազմասրան փառահեղ աւերակ:

Նկեղեցի. Զօլա-խաչ, Պարանլուխ վերին և ներքին, Գեղագլարա, Ալուզալու, Ալղուս—մեծ հայ գիւղեր. Կոխրուլախ—պատուական առաստահոս աղբիւրներով. Նօրաղուխ—շատ հնութիւններ. Զաղլու—ծովափնեաչ, լաւ իշխան ծուկ որսալու տեղ. Բասար-թէչար մեծ կեդրոնական գիւղ՝ շուկանով և ալճ:



Ը.

ՀՕՏ ԵՒ ՆԱԽԻԹ

արը գնացող ժողովուրդները լեռնակին արօւներում բնակիում են վրանների մէջ. բացառութիւն են կազմում Գեղարքունիքի հայ գիւղացիները, որոնք սարերում իրանց արօատեղերում հաստատ տներ—խրձիթներ ունին շինած. զրանց անուանում են զօմաններ կամ զօղաններ. Զօմանների խրձիթները տեղական բարբառով կոչվում են հօլիկ, որ կընշանակէ կլօրիկ տընակներ. Հօլիկները կէս գետնափոր, անտաշ քարից և հորից՝ կլորածն շինած մի տեսակ տնակներ են, կեղտառ, խոնաւ, մութ. ունին մի մուտք և մի պստիկ մերդիկ առաւտաղի մէջ. Հօլիկների ներսը մի երկու բաժանմունք ունի, որոնցից մէկում կաէ մի փոքրիկ թոնիր: Աւդ հօլիկների մէջ են գիշերները քընում կիները և աղջիկները. այդ տեղ են պատսպարվում նոյնակէս հորժիկները. զառները, կովերն ու եղները մնում են շրջափակ տեղում՝ հօլիկին կպած, բացօթեաչ. Նոր-Բաւաղիդի հայ գիւղացիները սարն են զրկում հօտերի և նախիրների հետ միան իրանց կիները, մանաւանդ ջահիլ աղջիկները և երեխաները, իսկ աղամարդիկ զրեթէ զլիսովն մնում են գիւղում, դաշտագին պարապմոնքի համար. Գիշերը խեղճ կիները և աղջիկները մուտք ունեն ունի որ և է արօս գնահատելում նրա զիրքը, ջրերը, ճանապարհները և ալճն. Արդ, մի թեթև ակնարկ ձգելով Գեղար-

ուը պինդ փակում են ու քնում. դուրսը նրանց վրաց պահպանութիւն են անում քուրդ հովիւները, անակնթարթ հսկելով: Ազնիւ քրդեր և քաջ: Հօլիկները շրջանածե շարուած են մի բաւական կլոր հրապարակի շուրջը. այդ հօլիկներով շրջափակ տեղում հանգչում են գիշեր ժամանակ ոչխարները. հօլիկներից դուրս կանգնած են հագերի մօտ ծառալող քուրդ հովիւների վրանները, որոնց մէջ զետեղվում են նրանք իրանց ընտանիքով և բոլոր կարողութիւնով: Քրդերի վրանները կոչվում են կրն. գետին ցցած մի քանի ծողերի վրաց փառմ են մի մեծ ալծի մազից խոշոր գործած՝ շալ, որի ծայրերը պարաններով կապում են գետնում ամրացրած ցցերին և շրջապատում են եղեգնից կամ բարակ ձիարաններից կաղմած ցանցապատով: Տաք եղանակին քրդերի վրաններում շատ ախորժելի է. իսկ ցուրտ, անձրե եղած ժամանակ՝ անտանելի է: Աւելի լարմար են և ցըրտից ու անձրեից ապահոված՝ թուրքերի վրանները, որոնք կոչվում են ալաջուխ, դագեա և չալրը. դրանցից ամենից ժամանակում անձրե ապահոված է ապահուած գետնին խիստմ են մի բաւական հաստ սին. զրանից 4—6 արշին հնուառութիւնով չուրջ անկուտում են կամարաձև ծողեր, որոնց վերի ծայրերը բերում ամրացնում են սիւնի ծայրին գանուած փայտի հաստ շրջանակին. ապա այդ շառաւիդներից շինուած կիսագունդը ծածկում են հաստ թաղիքով. ներքմից շրջապատում են եղեգնի ցանցապատով, կապիապում պնդացնում են պարաններով, մի կողմից մուտք են թողնում և այսն. Դագեան հասարակ, թեթե, փոքրիկ ալաջուխ է, առանց սինի. չալրը հասարակ սպիտակ կտաւից շինած վրան է, որպիսին գործ է ածվում պատերազմների ժամանակ:

Եւոներում ամեն արօտատեղի մի և նոյն արժանաւորութիւնը չոնի. արօտի արժեքը ի հարկէ նախ և առաջ կախուած է խտաերի տեսակից և որակից, նմանապէս նշանակութիւն ունի որ և է արօս գնահատելում նրա զիրքը, ջրերը, ճանապարհները և ալճն. Արդ, մի թեթև ակնարկ ձգելով Գեղար-

քունիքի լունավիճ արօտների վրա՝ կը փշատակեմ միան, թէ որ սարերն են առաջնակարգ համարիտում իրանց պատուականութիւնով և պիտանութիւնով անասնապահութեան համար: Տեղական ժողովուրդը առհասարակ առաջնութիւնը տալիս է Աղմանկան սարերի արօտներին, բայց ամբողջ գաւառում ամենամեծ հոչակը վագելում են Ալրիձա ասուած մի խումբ արօտները: Ալրիձան արօտականների համար մի դրախտ է, մեծ բախտառութիւն է համարվում, ով ունի ազգուղ արօտատեղ ամբողջ գաւառում միան Ալրիձան է, որ ամառը կատարելապէս լիբն է լինում անասնապահներով: Ալրիձան բռնում է Աղդաղի, Եքիջիլարի, Դիտվանքի, Արդուշասարի ստորաները և մեծ ու փոքր Ալրի գետակների հիանալի, չտեսնուած, հարթ հաւասար հովիտները: Ալրիձապում խոտը ամենաընտիր տեսակիցն է, թանձր բուսած, ժողովուրդի ասելով՝ խոտը այդ տեղ եւզալի է, ծաղկոտ է. չկան ազդ տեղ անձունի, հաստաբեստ, անպէտք բանջարներ. Ասոււծու օրհնած արօտներ են, զիրերը հանգիստ են անաստանների համար. սուր դարիվերները չկան. ձանապարհների ամեն տեսակ լարմարութիւն, ամենապատուական ջրերի անբաւ առատութիւն: Կան այդ տեղ երեք մեծ աղբւրներ՝ երկաթածմբավիճ ջրի և մի մեծ աղբիւր՝ բնական գելտերեան ջրի: Ակա կողմները հին Հայոց դարերում կոչվում էր Այրից գաւառ, ալսինքն քարանձաւների, կարանների գաւառ, որովհետեւ այդ տեղը լիբն է հրաբրվածին այրերով, որ և հիմա իսկ թուրքերը սրան անուանում են Մաղարախանայ, որ նշանակում է նոյնը, ալսինքն է ալբերով լի տեղ, հին անոնը միան կրում է գետը, որ ասվում է Ալրի-չակ-գետ, որից դուրս է եկել «ալրիձա» բառը, որ է մի բնդհանուր անոն գետի երկու կողմը տարածուած մեծաքանակ ընտիր արօտների: Ալրիձան թուրքերի և քրդերի ձեռին, բայց մի խոշոր մասն էլ դրաւած են Դաւալուեցի հակերը: Ալրիձաից մետու գալիս են Գեօգալդարափ արօտները, որոնք համատարած ծաղկապարդնեն, իսկ խոսերը սակաւ, դիրքերն էլ սուր դարիվալուեր են: Քելթիր

արօտները նոյնպէս հոչակաւոր են և ընտիր են միան տեղական սարերը փչացնում են անհամար զաշտամուկերը: Վերջին տեղն են՝ բանում Եանըլս իրան արօտները, որ գրեթէ ամեն կողմից պակասաւոր է: Ալրիձալում, մանաւանդ Քելթիում և Գեօգալդարալում՝ ամառը արօտների խոտը նոյնպէս մեծ քանակութիւնով հնձված է ձմեռուաէ պաշարի համար:

Խոշոր անասունների տեսակներից ամենից ընտիրը և ցեղականը համարվում է Փալբաջարի կովն ու եղը: Փալբաջարը մի բերրի, փոքրիկ գաւառ է հիւսիսավիճ Արցախում: Փալբաջարի անասունները նշանաւոր են իրանց խոշոր զարգացած մարմնով և կաթի առատութիւնով, առողջութիւնով և ուժով: Նրանց գոյնը փալբուն կարմրագոյն է, եղջիւրները բոլորաձեւ:

Յետոյ գալիս են՝ իրանց պատուականութիւնով՝ Վաւոց ձորի և քրդերի անասունները. ամենից սասոր են համարվում Շարուրի և Նոր-Բայազիլի գաւառի անասունները: Շարուրի անասունները առհասարակ նիհար են, թուլ գորշ գոյնով: Նոր-Բայազիլինը մանր են, շատ կան և սև գոյնով: Նորկարասուն ձըմեռը, ուտեսատի պակասութիւնը և վաստութիւնը զրանց շատ են վնասում:

Այդ կողմերի հօտերի ոչխարները երկու ցեղի են. Ղարաբաղի ոչխարի ցեղ ու քրդի կամ Արարատեան ոչխարի ցեղ: Ղարաբաղի ցեղի վլխաւոր և նշանաւոր չատկութիւնն է, որ նրա միսը քաղցր է, անծառ է. իսկ Արարատեան ցեղը նշանաւոր է իր բրդի պատուականութիւնով: Ղարաբաղի ոչխարին անուանում են տեղացիներ՝ հիրիկ, իսկ Արարատեան ոչխարին կոչում են մաղեղ: Ղարաբաղի ոչխարի գլուխը հաստ ու կոպիտ է, ականջների միան տեղն է երեսում, աչքերը պլուզ են և վայրագ: Իրանը զլորիկ է և հաւաք, զմակը զունդ, կիսով չափ պարագաներից հաջուած, պոչը հաղիւ նկատելի, բուրգը կոշտ է, հաստ դուրս ըրջուած, պոչը հաղիւ նկատելի, բուրգը կոշտ է, հաստ կարճ, զոյնը կարմրագոյն, սև և գորշ, միաը պատուական: Արարատեան ոչխարի զլորիկը գեղեցիկ է, ականջները երկար կամ ընկած, նախուածքը անուշ, իրանը կախ ընկած, զմակը

կրկնակի, մեծ և փոքր, իրար վրայ կախ ընկած, ունի փոքր պոչ, միաը հասարակ, բուրդը ընտիր, երկար ու նուրբ. գոյնը՝ մէկ աեսակինը բոլորովին մաքուր ճերմակ, միւս տեսակինը՝ կարմրադոյն։ Մազել կամ Արարատան ոչխարի կարմրադոյն տեսակի միսը աւելի լաւ է քան սպիտակինը և նրանցից աւելի դիմացկուն են վատ եղանակին և ուղեգնացութեան միջոցին, բայց բուրդը սոտր է քան սպիտակինը։

Անասունների հիւանդութիւնից նշանաւորները սրանք են. ազար կամ չօմա, տարախոխիկ. պատահում է մի քանի տարին մի անգամ և ամբողջ նախիններ է փչացնում. դարադ—կաշու հիւանդութիւն. պատահում է, երբ տարին չորավին է լինում կամ շատ խոնաւ. ընկնում են զլբաւորապէս ոչխարները, ոտերից մէկի կամ միւսի կճղակների արանքը վէրք է դրանում, որդժոսում կամ լեզուն է վէրքոսում. խոտացաւ ընկնում են խոշոր և մանր անասունները՝ մանաւանդ գարնան, երբ նիհարած դուրս գալով գոմերից և սարի առաստ, թարմ, հիւթալից և ծաղկալից խոտաց չափաղանց արածելով, փորեկնին ուռչում է, որից և մեռնում են. շատ անգամ օգնում է, եթէ ուռած փորը ծակում են, վնասակար գաղերը դուրս են գալիս, կենդանին ողջանում է. Խորախտ. կենդանին սկսում է սաստիկ հաղալ և որդներ դուրս թափել. քիչ է պատահում, որ դրանցից նրանք փրկուեն. քամի, որէ բէվմատիզմ. պատահում է ցյասահարութիւնից. կենդանու ոտերը բոլորովին կծկվում են, զիժ, պատահում է ոչխարներին, երբ նրանց ուղեղում գոյանում են մի տեսակ որդներ. կենդանին սկսում է ուղիղ գաղել աչս կամ աչն կողմը և արագ-արագ պատու գալ. միակ միջոցն է մորթելը. Անասունները նոյնպէս հիւանդանում են ծաղկով և շերմու տենդով։

Թուրքերը և քրդերը սարում եղած ժամանակ գրեթէ ոչինչ զբաղմունք չունին, աւելի զուարձութիւնով, հարսանիքներով են անց կացնում իրանց ժամանակը. բայց աշխատաւութիւնները ամարանցում համարեն կիների վրայ է. կթել, մէրել, խընոցի հարել, հաց թիսել, կերակուր եփել, լուանալ և ալճ։

Միայն հողագործութիւնով չպարապող թուրքերը և բոլոր քըրդերը ամառուակ վերջերը վեր են առնում իրանց գրասաները՝ եզ, էշ, ձի և գնում են Նըման, Կողբ, Նախիջևան և բերում են աղ, միրգ, ծիրան, վարունդ, սեխու և խաղող ու աղ ամենը բազմապատիկ թանգ վոխանակելով ալիւրի և ցորենի հետ Նորբազլոյի գաւառի գիւղերում, աղ հեշտ միջոցով ձեռք են բերում իրանց ամբողջ տարուակ հացի պաշարը. աղ ժամանակ արօտներում մնում են միան կիները և հովիները։

Սարից ժողովուրդը քաշուելուց մի երկու շաբաթ առաջ Էջմիածնի գործակալը և Սևանաւ վարդապետը շրջում են հաւրերի զօմաները և ժողովում են իւղ. պանիր՝ վշեալ վանքերի համար. Հայ մանրավաճառերը նոյնպէս աղդ ժամանակները ման են գալիս լեռներում և հաւաքում իւղ, պանիր իրանց ապանքի գնով։

Օգոստոսի կէսին լեռներում եղանակն արդէն սկսում է հակուիլ գէպի աշնանավինը. ցրտում է. կանաչ արօտները դեղնած են շատ տեղերում. ամենաբարձր սարերի կատարներին մէկ-մէկ ձիւն է նստում. ամպ, մշուշ, տեղատարափ անձրեններ, մանր կարկուտ կամ ձիւնի զնդակներ, սրին ապանել ասում են խօրիկ, և ալճ. Անասնապահ ժողովուրդը արդէն սկսում է մըտածել լեռներից իջնելու մասին։

Օգոստոսի երկրորդ կէսից նախ թուրքերը և հայերը սկսում են շարժուիլ և շարան-շարան տուն վերջադառնալ. լեռներում տիրում է հետզետէ ամարտիւն և տխրութիւն. սասականում են զողութիւնները, վասն զի վերադառնութիւնները և թուրքերը փախցնում են հայերի անասունները գիշերներով և թաքչում են զատարկուած լեռների ծերպերում և ալքերում։

Ամենից վերջը սարերից հեռանում են քրդերը. սեպտեմբերի 15-ից նույն պատիկեր է ներկայացնում շուրջը, լուսթիւն համակ, բազէները միան պատու են գալիս բարձր վապարներում. վագրի ոն բաղերը, որոնք Անանի ափերում էին ամառը. մէկնում են զէպի հարաւ. մարդիկ իսկ՝ տխրութիւնով են բա-

ժանվում լեռներից: Մնում են սարերում միայն ոչխարների հօտերը իրանց հովիսներով, որոնք մօտները պահում են միայն մի էշ, որը կրում է նրանց հացի պաշարը, իսկ իրանք հովիսները դիշերները կուչ են գալիս միորեն է ժայռի կտորի ներքեւ. սեպտեմբերին պարզ օրեր են լինում և լեռները կրկին թեթև կերպով կանաչում են աշնան մանր կանաչով և ծաղիկներով, ու արածում են ոչխարները մինչև առաջին մեծ ձիւնի գալը, որ արդէն մնում է մինչև միւս գարնան. այդ ժամանակ շուտով ոչխարներն էլ քաշվում են ձմեռանոց տեղերը կամ քակվում են լեռնային գոտերում ու չոր խոտով կերակրում: Վաճառելու ոչխարի հօտերն էլ լեռներից ուղղակի ոչխարատէրերը մի քանի հովիւների հետ տանում են վաճառելու զանազան քաղաքներ՝ մինչև Բաքու: Խոշոր անասունները դուրս չեն տանում ծախելու, այլ գնողները իրանք զանազան քաղաքներից գալիս են Նոր-Բայազիդ և ազամելլից սկսած գնելով կով, եղ, ձի, պարտելով գիւղերը՝ գնում են մինչև Քալբաշար և ապա յետ դասնալով՝ հաւաքում են գնած անասունները և նախիր կաղմած՝ հեռանում: Նոր-Բայազիդի գաւառի մի եղ կամ կով կարժենաւ 12 րուբլուց մինչև 18. իսկ Քալբաշարի գաւառինը 18 րուբլուց մինչև երեսուն. Զիր երամակներ ունին միայն թուրքերը. Իւրաքանչիւր թուրք գիւղի արօտում միշտ լինում են 60—70 մատակ ձիեր, որոնց չեն բանեցնում, այլ պահում են միայն որ ծնեն՝ ձի վաճառելու համար:

Հենց այս մի քանի համառօտ հաղորդած տեղեկութիւնները բաւական են, որ կարողանանք ասել, թէ մեր երկրում մեծ ասպարէշ և պատրաստ նիւթ կաչ կանոնաւոր և ընդարձակ չափով անասնապահութիւնով պարապելու համար, որ նա մինէր ոչ թէ մի խեղճուկ ապրուստի միջոց, այլ մարդավակել բարօրութեան և հարստութեան լորդաբուլիս, մշտնջենական աղբիւր:



թ.

Կ Ա թ

անաղան ժամանակ են ծնոտում կովերը. իսկ էդ ոչխարները—մաքիները ծնում են իրանց զառնուկները որոշ ժամանակ. ցուկերը և կովերը միշտ միասին խառն են արածում, իսկ մաքիները ջոկ-ջոկ են արածում արու ոչխարներից: Երեանի նահանգում, ուրիշն և Գեղարքունիքում թուլ են տալիս որ արու ոչխարները—խովերը՝ միասին ման գան մաքիների հետ հոկտեմբերի սկզբից: Արցախում կամ Ղարաբաղում մաքիները խովերի հետ են արածում են միայն լունիսին և ծնում են հինգ մասից չետակ, որ կըլինի նոտեմբերին: Մաքին ծնելուց չետու երկու շաբաթից մինչև մի ամիս՝ մարդիկ նրան չեն կթում, այլ թուլ են տալիս, որ բոլոր կաթը ծծէ նրա փոքրիկ գառնուկը, որ մի քիչ ուժով վանակ խոտ ուտելու համար, մի ամսից չետու մաքին սկսում են կթել, միայն զարձեալ թուլ են տալիս, որ զառնուկը օրը երկու անգամ ուտէ իր մօր կաթը մի քիչ. մի ամիս էլ այդ պէս անցնելուց չետու, օրը մի անգամ են թողնում որ գառը ծծէ մաքիի կաթը. այլ ևս մի ամիս, ամիս ու կէս անցնելուց չետու, խոպառ զարարեցնում են կաթ տալ գառին, որ ալժմ արդէն բաւական մեծացած լաւ արածում է խոտ: Մաքին կըթ- գում է ամբողջ տարին 4—5 ամիս, սկզբում ամիս ու կէս,

Երկու ամիս՝ օրը երկու անգամ, ապա օրը մի անգամ. մաքին խոսի լաւ ամիսներին—մազիսի վերջին, լուսիսին, տալիս է մէկից մինչև $2\frac{1}{2}$, ֆունտ կաթ օրական. իսկ վերջում՝ $1\frac{1}{4}$ $1\frac{1}{2}$ կամ հաղլու մի ֆունտ կաթ. Նոր-Բայազիդի գաւառում մաքիներին կթում են կիները. Շարուրի թուրքերի մօտ նրանց կը-թում են աղամարդիկ:

Կովբերը ծճելոց լետու մի քանի օր՝ երբեմն մինչև երկու շաբաթ՝ չեն կթում նրանց, բոլոր կաթը թողնում են հորթերին, ապա կթում են. գարնանը, ամառը և մի ամիս աշունքից օրը երկու անգամ, վետոյ օրական մի անգամ և դաղարեցնում են կթելը մի ամիս, երկու ամիս, կամ երկու շաբաթ առաջ նրա ծճելու ժամանակից. աղամարդ, գաշտակին տեղերում ամրող տարին կովը կթվում է համարեա 10 ամիս, իսկ լեռնացին գիւղերում 7—8 ամիս՝ նայած կովի պահպանութեան, սըն-նունդին, առողջութեան և ազն: Այրիճակի մի քանի տեղերում, օրինակ Եանին գիւղում, Արցախի Քալբաջար գաւառում լունիսին ամբողջ կթում են կովբերը օրը երեք անգամ. լաւ կովը մի օրում տալիս է ազդ տեղերում կէս փութից աւելի կաթ. իսկ գեղարքունիքում ամենալաւ կովը տալիս է օրական հազիւ 12 ֆունտ կաթ: Թէ կովբերը և թէ ոչխարները ամենաշատ կաթ տալիս են մազիսին և լուսիսին, երբ խոտը թարմ և առատ է. լուսիսից կամաց-կամաց կաթի քանակութիւնը պակասում է, առաջին ամիսներում կաթը լինում է շատ ջրալի և քիչ խւղալի, նոսր, որովհետեւ ազդ ժամանակուած խոտն իսկ շատ ջուր է պարունակում է իր մէջ, իսկ ամառուակ վերջին և աշնան կաթը լինում է թանձը և շատ խւղալի. ազդ պատճառով դարձան կաթից զլիաւորապէս պանիր, իսկ ամառուակ և աշնան կաթից առ հասարակ իւղ են շինում: Տեղացիները ասում են. կովի կաթի իւղն է զովելի, իսկ ոչխարի պանիրը. ուստի զլիաւորապէս կովի կաթից իւղ են շինում, ոչխարի կաթից էլ մեծ մասսամբ պանիր:

Ամնաթանձը իւղալի կաթը համարվում է նախ ոչխա-

րինը, ապա մատակ գոմշինը և լետոյ կովինը, բայց վերջինս է ամենից անուշը, դիւրամարսը և առողջարարը: Կաթը խմում են հում կամ թաքցրած. Նրանից եփում են կաթով կոչուած կերակուրը, եռացրած կաթի մէջ եփում են բրինձը, որ աւելի ախորժակով ուսումնամ է, երբ մի քիչ պաղած է: Կաթից շինում են մածոն աչսպէս. եռացրած կոթը թողնում են աչնքան հո-վանակ, որ մատը մէջ զնելով զբացուի որ նա մի քիչ միայն տաք է, գոլ է, աչն ժամանակ մի կաթսակ, մի փութաչափ կաթի մէջ ձգում են մի դրագալ հին մածուն և թեթև խառնում են, ապա կաթսան մի թաղիքով կամ կապերասով ծածկում են, որ շուտով չսառի, հինգ-վեց ժամից լետոյ մերուած նոր մա-ծունը պատրաստ է:

Պանիր շինելու համար նախ պէտք է ունենալ մայս, ո-րին Գեղարքունիքի հայէրը անուանում են զեղ և զեղաջուր և որ պատրաստվում է ալսակս, վեր են առնում գառան կամ հորթի ստամոքսի վրայ գուացող ծարպավին փառը, որ ատլում է շիլա, կտրտում են զրան, աղում են, հետը խառնում են քիչ շիպ, շաքար, չամիչ, արմաւ, ցորեն, և ոմանք զանազան ալ համեմունք, որոնք անպալման հարկաւոր չեն, օրինակ վայրի սոխ և ալին, ու ազդ ամենն ածելով մի կաւէ ամանի, պտուկի կամ պուլիկի մէջ, զնում են տաք տեղ, արևում կամ թոնիրի կողքին. Երկու երեք օրից լետոյ ազդ նիւթերի խառնուրդն ար-դէն ունի ան լատկութիւնը, որ կարող է կաթը մակարեսը, մե-րել, գուացնել պանիր. մօտաւորապէս 1—2 ֆութ կաթի մէջ ձգում են ազդ գեղլոց մի դրագալ: Նոր-Բայազիդի բնակիչները ոչ թէ ողջակի վշեալ նիւթերից գուացած խարնուրդն են զործ ածում, ազդ նրանց եփում են ջրի մէջ, ուր անցնում է նրանց բոլորի հիւթը և արդէն ազդ ջուրն են զործ ածում, որ ասվում է զեղաջուր. 1—2 ֆութ կաթի մէջ ածում են մի շե-րեփ զեղաջուր:

Պանիր շինելու համար չպէտք է կաթը եռացնել, ալ պէտք է վեր առնել նոր կթած տոք-տաք կաթը, կամ եթէ

պաղած է, մի թեթև տաքացնել, դեղաջուրը ածելուց լետոց մի կէս ժամից արդէն կաթը մակարդուած եղած է պանրավին զանգուած, որ թափում են կտափ քսակի մէջ ու մրզում, որ չուրը քամուի, ապա դնում են այդ պանրով քսակը քարերի վրա, վրան էլ դնում են ծանր քարեր, որոնց ճնշողութիւնից մի քանի ժամից լետոց բոլոր ջուրը պանրից դուրս եկած է լինում և ստացվում է խոչոր կտափ պանիր: Պանիրը երկար ժամանակ պահելու համար, մանր կտրտում աղում և լցնում են աղաջրով վրը օչնակների կամ կարասների մէջ. կամ թէ չէ կտրտած աղած պանիրը լաւ խառնելով ժամկի (չորի) հետ, լցնում են փշեալ կաւէ անօթների մէջ. այս վերջինը ասվում է մոթալ, մէջի պանիրն էլ մոթալի պանիր:

Իւղ շինելու համար վիր են առնում երեր կամ չորս օրուայ մածունը ու մի փութաչափ ածում են խնոցին, որ պարաններով կախուած է լինում փակտի եռոտանից կամ տանիքի գերանից և երկու կին սկսում են խնոցին առաջ ու գետանելով հարել, հնաղնետէ գոլ ջուր էլ ածելով խնոցիում եղած մածնի կէսի չափ. ինչքան մածունը հին է, այնքան չուտ է ստացվում իւղը և ընդհակառակը. պատահում է որ մինչև 10 օր շարունակ մածուն են գումարում, որ պահում են տիկինի մէջ, ապա սկսում են հարել. 2—3 օրուայ մածունից իւղը դուրս է զալիս երկու ժամ հարելուց. 8—9 օրուայ մածունը կէս ժամ լաւ հարելուց արդէն դումանում է իւղը. Երբ խնոցում խղափին մասերը դուրս են ցատկում մածնաջրի—թանի երեսը և իրար կպչում, այն ժամանակ զարդակում են խնոցին կտափ մէջ, կամ ուղղակի ձեռքով խնոցին միջից հաւաքում են իւղը և կտափի մէջ մրցելով, ջրով էլ լուսանում են, որ թանաջրից լաւ մաքրուի. այդ թարմ իւղը ասվում է կարագ. կարագը աղում են և լցնում տիկինի մէջ պահում. աղած կարագը երկար պահելու կամ կերակարի համար գործ ածելու, պէտք է հաղելով մաքրել կեղտուրից և փակտի, կտափի կամ զանագուած պահանել: Մածունը հարելուց և իւղը դուրս բերելուց լետոց

մնացորդ հեղուկը ասվում է թան. թանը կրակի վրաէ եռացնում են ու լաւ քամում ջրավին մասը, ստացած փիթրուն նիւթը ասվում է ժամիկ, թուրքերէն՝ շոր. ժամիկը հացով կամ կարագով ուտում են. աղում են պահում ձմեռուաչ համար. ժամիկով պանիր են պահպանում և մոթալ շինում, ինչպէս վերը վիշեցի: Խակ երթէ թանը ջրից քամուի ու մնացած զանգուածը կտոր-կտոր արեւում չորացնուի՛ այն ժամանակ կստացուի աղքատների բաժին չորաթանից շինում են բալակոշ կերակուրը:

Մածունը ածում են կտափ քսակի մէջ կախում, բոլոր ջուրը դուրս գալով ստացվում է քամած մածուն, որ համով աւելի զուրեկան է քան հասարակ մածունը. Քամած մածնի հետ խառնելով մի քիչ կարագ և սեր թեթև աղ ածելով, ածում են մի պատուի մէջ ու պահում են բերանը կապած պազ տեղում 2—3 ամիս, որից լետոց ամբաղջ այդ խառնուրդը զարձած է լինում սերի կամ կարագի պէս մի բան, շատ անուշ համով. դրան ասում են մածնակարար:

Սերը երեք տեսակի է և երեք կերպ է հաւաքվում. Նոր կթած կաթը բերանը լան կաթսափ մէջ զնում են սառը տեղ. ամբողջ ցերեկը և զիշերը մնալով, կաթի միջի իւղափին մասնիկները—սերը բարձրանում է վիրե և բաւական հաստ շերտով կանգնում է, որ զրգալով հաւաքում են—այդ է կաթ-սեր: Երկրորդ կերպը հնաևեալն է, կաթը կաթսայում եփ ածելուց լետոց թողնում են որ սառչի, այդ ժամանակ նըա երեսին նոյնպէս կապիւմ է սերի շերտ. այդ էլ կոչվում է թուրքի կամ Ղարաբաղի սեր. վերջին տեսակն է մածնի սերը. Երեսը չքաշած կաթից երբ մածուն են մերում, մի 6—8 ժամից մածնի երեսին գումանում է լաւաշի պէս հաստ և պինդ սեր. այս վերջին տեսակը շինում են Երեսի նահանգում մանաւանդ քրդերը:

Համերը շինում են գարձեալ մի տեսակ պանիր, որ անուանում են թեկ պանիր կամ զաժ. պատրաստում են առալէս.

հէնց որ գեղաջուրը կաթի մէջ ածելուց յատո՞չ վերջինս մակարդվում է, նրան ձեռով սկսում են հարել, խառնել աճնքան որ նա զառնում է մի մածուցիկ, կպչուն զանգուած, որին կարելի է երկար պարանի կամ նոն խակ թելի պէս երկարացնել և այդ ձեռով աղաջրում երկար ժամանակ պահել համը ախոր ժալի չէ:

Աշխարի բուրդը խուզում են տարին երկու անդամ. զարնան և աշնան, զարնան բուրդը լինում է երկար մազով և բստացվում է խրաքանչխար ոչխարից Յ մինչև 7 ֆունտ (չլուցացած). աշնան բուրդը ստացվում է շատ քիչ—հազիւ $\frac{1}{2}$ —1 ֆունտ և աճնքան կարծ մազով է լինում, որ թել չի շինուել նրանից, այլ զործ են ածում միան թաղիք (քեչա) և քրդի գդակ (քոլող) շինելու համար. զարնան բուրդը բացառապէս թել է մանվում զանազան գրձուածների համար:

Մեր երկրի ժողովուրդի ամենամեծ մասը գիւղացիներ են երկրագրծ—անասնապահ. դրանց մօտ է մեր հաստատ հարստութեան, բարօրութեան առնաւատչեան. ամեն մի քաղլ դրանց կեանքին մօտ ծանօթանալու, ամեն մի փոքրիկ միջոց դրանց օգնելու իրանց պարապմունքում բառաջաղիմնելու՝ կընշանակէ կենդանութիւն տալ հայրենիքին, մղել նրան զէսի քաղաքակրթութեան ձանապարհը:

Սրանով վերջացաւ նամակներիս աճն շարքը, որի նպատակն էր մի քանի տեղեկութիւններ հազրողնել Նոր-Բաւազիդի զաւառի կամ Գեղարքունիքի հաւաքնակ մասի վրակօք: Յաջորդ նամակներով նոն ձեռով համառօտարար կընկարագրեմ մեր երկրի ուրիշուրիշ վայրերը:



Ճ.

Ծ Ո Բ Ո Փ Ո Բ

Նդրկովկասեան երկաթուղու Աղատեի կապարանից մեկնում է մի խճողի ճանապարհ, որ մեղ տանում է մի սքանչելի աշխարհ: Կապարանը գտնվում է կուր գետի ընդարձակածաւալ տօթակեղ զաշտավակրում: Ազդ կէտը, որ տասը տարի առաջ ամաւի անապատ էր, ամժմ ներկաւանում է մի գուրեկան պատկեր տափարակի լան ծաւալի մէջ, գեղեցիկ շինութիւններով, նորաստնեկ թարմ փոքրիկ ծառաստաններով, ապրանքների միջերանցով, խանութներով, քարվանսարաններով. հաճութեամբ ճանապարհորդը ակսեղ քիչ հանդստանում է, ապա առաջ մղում իր ուղին:

Կապարանից հեռանալով դէպի արևմուտք եօթ վերստ, անցնում էր Դաղ-քեասաման բաղմամարդ մեծ թուրքարնակ դիւղի միջավ, որն ամբողջ թաղուած է խալուղի և մրգաւէտ ազինների մէջ. զիւղումը կաէ տասը տարուց ի վեր արքունական երկդասեան կանոնաւոր դպրոց: Այս տեղից երկու վերստ առաջ գնալով մտնում էր նորակերտ Դաղախ աւանը՝ վակել չաշէն տներով ու խանութներով: ուր նստում է համանուն զաւառի պետը և այլ պատշաճի պաշտօնեաներ: Մինչև առաջին փոստավին իջեանը—Ռւզունթալա—քոսն և եօթը վերստ է, Ռւզունթալան մեծ հաւ դիւղ է, մօտ երեք հարիւր տնից բաղկացած, փոստավին իջեանից երկու վերստ հեռու, հէնց աճնտեղ, ուր սկսվում են լեռները և վերջանում է գաշտը: Դիւղը շրջապատուած է հոծ աղբեստանով և թանձր ծմակով. ունի եկեղեցի երեք քահանապով, դպրոցի պատրաստ շնչք, որ դեռ բացուած չէ:

Ուզունթալավից քիչ ներքեւ մի լազնանիստ սրածալը բլրի վրայ կայ մի աւեր աշտարակ—ուղղմական դիտանոց՝ պատերազմական դարերից մնացած. մի աստվածի աշտարակ էլ կայ աւելի վերև դաշտի վրայ. Դիւղից վերև անտառում երեսում են մի քանի վերստ լառաջ վարելով ճանապարհը, հանդիպում ենք բազմաթիւ վիթխարի ընկուղենի և այլ ծառերի և մօտենում ենք սարերի բերանին, մտնում ենք կամաց-կամաց Աղստել կամ Դիլիջանի նշանաւոր ձորը, որի երկարութիւնն է մոտ 40 վերստ. Չորս քանի գնում՝ նեղանում է, լեռներն աւելի ու աւելի վեր ոլանում. դրանք դիմովին ծածկուած են խիտ անտառներով. բարձրերը և դէպի հիսախա նախող երեսները՝ գրւխաւրապէս կոնաձեւ եղենի ծառերով. այդ ձորից դէպի աջ ու ձախ ընկում են լողնաթիւ մութ ծործորներ, որոնց շատերից խոխոջալով փոտկներ են գալիս խառնվում Աղստելն, որ որոտալով, մրանչալով սրբնթաց հոսում է անազին ձորի խորերով. Գետի ափով, անտառի միջով՝ օճապտոստ բարձրանում է խճուղին, ներկայանալով մի բնական ծառողի:

Դիլիջանի ձորը լիքն է բացառապէս հաջ գիւղերով. թուրքերը, որոնք գրեթէ ամենքը սիւննի աղանդիցն են, մնածամեծ գիւղերով ապրում են Կուր գետի տափարակում, մայմանց սեպտեմբեր տեղափոխվում են այս լեռների կատարները ամառն անցկացնելու և իրանց հօտ ու նախիրը արածացնելու. այդ ժամանակ աննկարագրելի նեղութիւններ են տալիս հաերին, ոչ թէ տեղի—արօտների նեղութեան պատճառով, այլ զա կարծես մի սովորութիւն է զարձել նրանց համար, որպէս գալւերը չեն կարող անտարբեր անցնել ոչխարների մօտով. Դազախ գաւառի թուրքերը իրանց դէմքի գծագրութիւնով ամենին չեն զանազանվում հայից. զրանց կիները վերջին տարիներս սովորութիւն են արել հազնել հայկական-վրացական տարագի շորեր. Այս կողմերը հին ժամանակները կոչվում էր Շորոփորի գաւառ, որ կազմում էր հին Գուգարաց աշխարհի կամ նահանգի մի մասը. Այստեղի հայերը հին բնիկ վաղնջական

ժողովուրդ են. խօսում են մաքուր Արարատեան բառ-բառով. սրանց խօսակցութեան մէջ նկատելի են շատ ընտիր բառեր և ոճեր. մանաւանդ հետաքրքրական է այն հանդամանքը, որ ցարդ գործ են ածում բացերի անկատար ժամանակը հին գրաբառ ձևով. օրինակ փոխանակ ասելու երգում էր, շինում էր, նըստում էր և ալին, ասում են—երգէր, շինէր, խօսէր, նստէր և ալին. Ուրեմն, անշուշտ, գրականական և հնագիտական շատ պիտանի նիւթեր կան Ծորոփորի հայերի մէջ ժողովմիլու, եթէ երբէք հետաքրքրող գտնուի. Օրինակ առաջ բերեմ այս գիւղացիների մի սովորութիւնը. Համբարձմանից մինչև հունձի ոկեսուիլը՝ ամեն գիւղ շաբաթուակ մէջ մի օր տօն է պահում, որ կոչվամ է հոքմի, մեծ խօսութիւնով, այսինքն այր ու կին ու չինչ գործի չեն կինում. Դիլիջանում հոքմի պահում են երկուշրթի օրերը, Քարվանսարա գիւղում հինգշաբթի օրերը և շրթի օրերը, Քարվանսարա գիւղում այն սնահաւատութեամբ, ալին. Հոքմի պահում է ժողովուրդը այն սնահաւատութեամբ, որ ցանքսերը չվնասուին կարգուածից, հեղեղից, մորեխից ևալին:

Ծորոփորի հայերը, Երկու սեռի մարդիկ էլ, բարձրահասակ, քաջակազմ, մրացօն և բաւական գեղադէմ են. վարում են կղզիացած, խաղաղ, հնաւանդ սովորութիւններով, Երկիւղած կենցաղ, պանդխտութեան չեն գնում. չնայած բնութեան ճոխութեան հարուստ չեն. Խստանիաց, տպէտ, ճնշուած վերին աստիճանի. Հիմնական պարապմունքնին Երկրագործութիւնն է, բաւական չափով ունին նմանապէս հօտ և նախիր, որոնց ամառը զրկում են սարը ընտանիքի սակաւաթիւ անդամների հետ. բացի զրանից ամեն գիւղ ունի խոզի երամակներ, որ պահում են անտառներում. Ազգեպանութիւնով զբաղվում են միաւն մի քանի տաք չերտում, տափարակից մօտ գտնուող գիւղը՝ Ուղունթալա, Աջաջուր, Քարվանսարա և ալին:

Բացի չեն և ապաս գիւղերից կան բաւական թուով կործանուած գիւղերի տեղեր, կիսաւեր վաճքեր, եկեղեցիներ և ալին. Ցիշեմ մի քանիսը. Աջաջուր գիւղ՝ մօտ 200 տուն ժողովրուով, եկեղեցով, դպրոցի պատրաստի շէնքով, ուր դեռ ու-

սում չէ սկսուած. այդեստաներով շըջապատռած, փառաւոր դիրքով. սրա մօտ է. Ս. Մակար անունով մի վաճք, արեղաէ չկաէ մէջը, ուխտառեղի: Սեւ-Քար, լեռների խորերում ճանապարհից տարակաէ գիւղ: Սրա մօտ էլ Ս. Լուսառորիչ անունով ուխտառեղի կաէ: Նարիսաշ-Քոքրիկ գիւղ. սրա դէմ մի ձորի միջով, որ դուրս է գալիս մինչև Սևան, կան կանդուն մեծ խաչքարեր, երկի հին ժամանակ կարաւանների ճանապարհը այդ տեղով է եղել: Գօշա-Վանք գոքրիկ գիւղ համանուն՝ գիտնական բրաւագէտ Գօշ-Միթթար մատենադրի շինած գեղեցիկ վաճքով. հովասոն դիրքով, անտառապին ծովի մէջ կորած: Քարվանսարա, մեծ գիւղ, եկեղեցի, բազմամետ զպրոց. կետրօնական գիւղ, շատ խանութներով քարվանսարաներով. խճուղու վրաց, փուտափն իջնանալ: Ծոբոփորի ամեն գիւղերը անտառներով պատած են և լի են քաղցրահամ աղբիւճերի ջրերով. կլիման ամբողջ դաւառում բացարձակ առողջարար է: Աղբան—մեծ գիւղ. նշանաւոր է ազստեղի ցորենը իր առասութիւնով և ըստիր տեսակով: Պօղոս-Քելիսէ, 70 տան, եկեղեցի, զպրոցի շինք, (դաստառութիւն չկա) սրա մօտ կան երկու մեծ կիսաւեր եկեղեցիներ—ուխտառեղի: Հաղարծին ութ հարիւրամեաէ հին նը: շանաւոր վաճք, երեք գեղեցկաշէն տաճարներից բազկացած 25 տարի առաջ սրան ապատ արաւ Քանաքեռոցի Էջմիածնակ միաբան Պօղոս վարդապետը, որ աշխատասիրութեան, առկունութեան ու քաջութեան հերոս է. 25 տարի է նա կովաւմ է վարի գաղանների և աւազակների հետ. մօտերա նա լուս ունի խապատ ապահովացնել իր վանքը. եթէ լաջող ելք ունենաէ վաճքի անտառի մասին եղած վէճը, այն ժամանակ նա կընառնի իր բուն նպատակին—բնակեցնել վաճքի հողերի վրաէ մի վրան տուն հող չունեցող համեր և բանալ ժառանգաւորաց մի դպրոց, որ վաճքը լինի ըստ իր կոչման լուսասփիւռ կետրոն:

Դիլիջան, որին տեղացիները ասում են Գիլի, հարիւրտուն հաէ, այնքան էլ ուսւ գաղթական բնակիչներով. վեհապանծ դիրքով, նշանաւոր ամարանոց. եկեղեցով և մի խիստ կանո-

նաւոր գարոցով: Ալստեղ կենում է մշտապէս մի գունդ զօրք, խակ ամառն էլ Թիվլիզից գալիս է մի ազ գունդ ամառելու. կաէ մէջը բաւական չարմար շինութիւններ, խանութիւններ, ատաղծ սղոցելու փոքրիկ գործարան. երկու աւերակ եկեղեցի և ալլն: Քանդուած գիւղերից կործանուած եկեղեցիներով՝ լայտնի են. Պուծուր-Դիլի, Մաթոսի գիւղ Փիշիկ, Ղաֆար, Բախտիար և ուրիխները:

Դիլիջանից երեք վերստ վերե, անցեալ տարուանից սկսել են բանեցնել մի պղնձահանք, որի տալիք արդիւնքը տակաւին բախոնի չէ: Այս ձորերի գիւղացիները մեծ քանակութիւնով վառելափակտ, ածուխ և մասամբ ասոաղծ են արտահանում երեան: Դիլիջանից վերև է կանդնած ան բարձրաբերձ լևոնաշղթան, որ բաժանում է հին Գեղարքունիքի նահանգը Գուգարաց աշխարհից. այդ շղթափ նշանաւոր գաղաթներն են՝ Մայմեղ Մարիամ-դաղ, Փիր-դաղ—գլուխն ուխտառեղի, Գեօդդաղ—կանաչ սար և ալլն, Մի ճարտարաշէն կոման ողիսով երկու ժամում Դիլիջանից վեր ենք սլանում այդ լեռների գլուխը, որտեղից բացւում է նոր հակապատկեր տեսարան—մերկ հրաբուխափն լևոներ, շրջապատած են մի մեծ երկնագուն նաղելի լիճ, որի մէջ կաէ մի փոքրիկ կղզի մենաստանով. այդ է Սևանը, որ պիտի նկարագրեմ միւս անզամ:





ԺԱ.

ՍԵՒԱՆ

և անում ձգեաւորներ են բնակում, մաղէ զգեստներ են հագնում, ալդ է ձեր գիտեցածը Սևանի մասին, իմ սիրելի ընթերցողներ՝ պալպիսի մի բան կատ, բայց դրանով չըպէտք է բաւականանալ, մենք պէտք է աւելի տեղեկութիւններ ունենանք Սևանի մասին։ Ես թող եմ տալիս ինձ ծանօթացնել ձեղ նրա հետ միախմբի գծեր տողելով, կատարեալ նկարագիրը թողելով ձեզ։ Սևանը ամենահին մի հաւկական պատկառելի վշատակարան է. Նա գուցէ միակ հաստատութիւն է ինին Հայաստանի մէջ, ուր նրա հիմնուելուց ի վեր հաղար հինգ հարիւր տարուակ մեծ ըբրջանում միշտ գորութիւն է ունեցել, միշտ չէն է եղել. Նա մի վերին աստիճանի առողջարար ամարանոց տեղ է, զուարձալի զրօսալայր, ամառը հանգստանալ, կաղզուրուիլ, թարմանալ ցանկացողների համար. Նա բնութեան աճուն գեղեցկութեան մի կատարելատիպն է, մի հսկական, կենդանի, անթառամ, ոսկեծղի պատկեր է, նման լաւերժանարսի՝ մշտնշենական գեղեցիկ, պայծառ, քաղցր. ացելէք Գեղամաց ծովակին, որի կապուտակ, վճիռ ջրերը շատ նշանաւոր բաներ կըպատմէն ձեղ, որ իմ գրիչը չի զօրում ակսեղ գրել։ Սևանն է նմանապէս մի ճգնարան, անապատական կեանք վարել ցանկացող հողերականների համար. սական ներկայումս բուն անապատական կենցաղի զաղափարին համապատասխան ոչինչ չկատ. կան ակտեղ, ալն, մնացորդ չնշին նշարներ արտաքին ձևականութեան, որ Սևանի նախկին ճգնաւորները մի-մի պահապան հրիշտակներ էին և որպես սուաքեալներ, նրանք մարմնացեալ առաքի-

նութիւն էին, և որովհետեւ օրինակը աւելի է աղբում քան խօսքը, ուստի եղան նրանք նորածին քրիստոնէութեան զօրավիզ, որպէս հրավին մեծ վառարաններ՝ ջեռուցանում էին հաւատը, հզօր կերպով աղբում նրա տարածմանը, լաղթանակին և հաստատման։ Նրանք եռանդու կրակոտ հոգի, բանուկ, սուր միտք և սիրալրորոք սիրոտ ունէին, նրանց կեանքը, մեծ միտքը, մեծ գաղափար ունէր, որի իրագործման համար ամենքը դիտակցաբար և անձնուիրաբար ճգնում էին, ալն է՝ վաւել քրիստոնէական անբիծ, աշխատասէր զործօն և անձնուէր կեանք. քրիստոնէութեան նոր սկսուած ժամանակ, աղդպիսի խիստ զոհոցաթիւններ, ձիգեր անհրաժեշտ էին, որ նա կարողանար հաստատուել. Ալդ խառակրօնութեան դարերն անցել են, աղժմու քրիստոնէաց զործիչը, որ ուղում է եկեղեցուն—ժողովրդին ծառակէլ, անշուշտ պահպանելով դարձեալ անբիծ վարքի, աշխատասիրութեան, անձնազոհութեան սկզբունքները, պիտի ժամանակին լարմար պատրաստուի և զինուրուի զործելու. հակառակ դէպքում նա կըլինի կամ խարեփակ, կամ վատած, անպիտան մարմին։ Ի հարկէ, չի կարելի ամժմեաններին համեմատել նախնի ճգնաւորների հետ։

Պարզ է, որ Սևանը պիտի հիմնովին կերպարանափոխուի, ժամանակակից եկեղեցուն ծառակէլու լարմարուի։

Լեռնալին բարձր Սևենովկա փոստակին իջևանից իջևանով գէպի Սևան, ինչ աղզի, վմածկի և կրթութեան ու ինչ հասակի մարդ լինի ճանապարհորդը, նա ամբողջապէս լափշտակ-վում է ծովակի սքանչելի տեսարանով, և նրա մտածմունքները խապառ նուիրվում են նրան զննելու, զիտելու և հիանալու։ Անցնելով Զիրուխու մեծ հապանակ գիւղի միջով, ճանապարհը շարունակում էք ուղիղ լճի ափով և հասնում էք փոքրիկ հայրենակ Ցամաքարերդ անունով գլուղը, որ ներկապացնում է մի բուն անշուք խրճիթներ—ՅՈ տուն—ուղիղ ծովակի եղբին զետեղուած։ Կղզին մտնել ցանկացողը պէտք է ալսաեղ իջնի և գնայ աղղակի պահատունը, որ մի գեղեցկատես դիրքով վա-

Քելուչ շինութիւն է երեք սենեակից բաղկացած. ազդուղ մըշտապէս կենում է մի արեղայ որ ընդունում է ուխտաւորներին և ճանապարհ դնում դէպի կղզին և ուրիշ ժամանակ հակում վաճքի գրաի տնտեսութեան։ Վանքը լճի վրափ երթեակութեան համար ունի երկու լասա, որոնք կազմուած են իրար ամրացրած ահազին վերաններից. դրանք մնացած են հին ժամանակից պահմ անդրդադրելի մնում են, և երեք նաւակ, որոնցից ամենամեծը կարող է տեղաւորել մօտ հարիւր մարդ, կամ կրել մօտ չորս հարիւր փութ մթերք։ Վանքը միշտ պահում է չորս թիավար մշակներ։ Նաւարկելու համար դէպի կղզին, առհասարակ, վաճատնից ոտով գնում են մինչև «նաւազուռն» կոչուած փոքրիկ, ծոցիկը, ուրտեղից ջրի վրայալ ուղիղ գծով մինչև կղզին մի վերստ է. այդ ծոցիկը դանդում է մի սարի սառուսում, որի թիւունքով անցնում է խճուղին. սարը կոչվում է «Մաշտոցներ»։ Ազդուղից բարձր ճան տալով, կղզու վրափից լսելով ձեր ձախնը, շուտով բերում են նաւակը և ձեղ տանում վաճքը. Կրդդու հիւսիսակին կողմի երկարութիւնով ընկած է մի չերտ նեղ տափարակ, որի վրայ մէկ ծալիք մինչև միւսը կան սազարթախտ ուուի և բառդի ծառեր, որոնք կազմած են մի ընաիր և պատուական ձեմելիք։

Կղզու մնացեալ մասն է ձուաձեւ մի սարակատար, տեղանութեան մուտքերով և առհասարակ խստարուսերով ծածկուած. Կրդդու արեելեան և հարաւալին կողմերը սեպածեւ ժայռեր են, որ շեշտակի իջնում են լճի մէջ։ Տափարակի վրաց գտնվում են քսանի չափ լարմարաւոր սենեակներ ուխտաւորների համար. մի փարբիկ քանդուած մատուռ. մի հասարակ քարաշէն եկեղեցի, ուր լինում է ժամասացութիւնը. դրան կից երկան երկու շարքով մի մութ լան միջանցքով շինուած են միականի կաւաշէն, տղեղ, մութ, խոնաւ խցիկներ և խուցեր միաբանների համար, ճաշտուռն, մառան, աբրար և ալւ։

Վարդապետների խուցերը ունին մի-մի փարբիկ պատռհան, խակ տիրացուների, սարկաւագների խցիկները պատռ-

հան չունին, այլ լուս ստանում են վերեից, փոքրիկ չեղ կերպիկներից. այդ խցիկներում հաղիւ երկու մարդ աղատ կարող են շարժուիլ. մութ, խոնաւ, ողը խեղդուած. անսովոր մարդը հազիւ կարող է 10 րոպէ աղտոեղ նստել. Սևանալ պիմու վանականներին կարելի է բաժանել երկու կարգի. հիներ և նորեր, հիները հաղնում են բրդի շալի շորեր. ամբողջ օր, թէկուզ ամենապաջառ եղանակին՝ խցերում փակուած են մնում. խուցերը կեղտոտ, անկարգ, զարչածոտով լի, թանձր փոշի նստած ամեն տեղ, անկողինը չեն չարդարում երբեք և ալւն. նորերն ընդհակառակը աշխատում են իրանց սենեակները մաքոր, սարքած պահել զուարթ, ասող-խօսող, երդող, գործ են ածում ձերմակներն, ծխում են, կարդում են լրագիրներ, հագնուում են մահուդի և այլ կտորի զգեստ, զթաւագարդ ժամացուց կախած (մինչև անդամ ոսկի ժամացուց) և ալւն։


Օրը 4 անդամ կատարում են ժամասացութիւն. ցանկացողները կէսօրին մոնում են հասարակաց ճաշտառնը, ուր արդքում է միան, մի աստու և մի բաքոն հաց. ամեն մարդ երքուզում է, մոնում է իւր բաժինն ուտում և շըսպասելով միւներին դուրս է գնում. ապուը կամ չորբան շինում են բրընձից, լրբուց, ոսպից և ազն՝ եփելով ջրում և վրան ածիլով քիչ ձէթ կամ իւզ. երեկուեան ընթրիք չըկաչ, այլ բաժնում են միմի կտոր հաց, երբեմն մի կտոր պանրի կամ մի քանի բոխու հետ և ալւն. Ի հարկէ զրանով ապրել չի կարելի. գա միան արտաքին ձեսկատարութիւնն է. իսկապէս ամեն մի խուց մի անձնական մատան և խոնանոց է, ուր ամեն ոք իր համար՝ դուռը պինդ փակելով, պատրաստում է «օրապահիկ», միշտ թէկ և ալւն. Վանքի թանգարանը բաղկացած է երկու սենեակից. մէկում կան մօտ երկու հարիւր ձեռապիրներ և 400 տպուած զրքեր՝ կրօնական բովանդակութիւնով, միւս սենեակում գտընչում են զդեստներ, եկեղեցական սպասներ, որոց մաստնքներ և ալւն, որոնց մէջ կան մի քանի ուշադրութեան արժանի հնութիւններ. նշանաւոր է մի կէս արշինաչափ երկախէ հասա-

բակ խաչ, որ ասվում է Առւրբ Նշան, որի կենտրոնում կատ ամբացրած մի փոքրիկ կտոր խաչավայտից, աւանդութեամբ Աշոտ-երկաթի զրօյի խաչն է, մանաւանդ որ անպէս է շնուած, որ ձողի վրա հազցնուի. աարին մի անգամ շրջեցնելով դրան ամբողջ գաւառում, ժողովում ևն բաւական փող, ոչխար, երինջ և ալին:

Վանքը յաճախ ունենում է եւրոպացի, ոռուս հիւրեր և մասնաւոր ուխտաւորներ. բայց շրջակա ժողովրդից ուխտաւորների մեծ բազմութիւն լինում է վարդավառին և վերափոխմանը: Վանքը ունի կալուածքներ՝ երկու գիւղ—Յամաքաբերդ և Նրանից քիչ հեռու Գոմաձոր (40 տուն), խանութներ—Ելենօվկա, Երևան, Թիֆլիս, Գանձակ, Զրադաշտներ՝ Նոր-Քայավիդ. Հարիսր զբուխ խոշոր անասուն, երեսուն կով, ոչխար և ալին:

Կղզու զագամին կան երկու գեղեցիկ, քարաշէն գմբեթաւոր վանքեր, ուր տարին մի անգամ միաւն պատարագ է լինում, դրանց շուրջը կան քանդուած տներ. օդի լաւութեան և շնութիւնների չորութեան համար, ի հարկէ ականեղ աւելի լաւ է բնակիլ, ինչպէս եղել է հին ժամանակ:

Ազդ վանքում կան շատ հին երկու մեծ սքանչելապահասքանդակապործած դոներ, և սիւների չորս ահազին խոպակներ ամբողջապէս փայտից լինած:



ԺԲ.

Մ Ո Զ Ա Ի Կ Ա

արեապաշտ և բնակավայրի հողն ու ջուրը ջերմ սիրող հալը աւցի կամ ուխտի վնալով բնապաւառի նուիրական վայրերին, ամեն հոգմոր միթմարութիւններ ու զուարծութիւններ ընդունելոց վատով՝ նրանցից բաժանուելիս՝ առնում է սրբավայրից մի բուռն հող, աճատեղ զգացած քաղցրութիւնների վիշտակը աճմուաց պահելու համար իր առնը: Ազդ օրինակ՝ երբ գունդագունդ ուխտաւորները հոչակաւոր Սևան մենաստանից մեկնելով՝ նաւակներից ոտ են զնում ցամաք, ընակի ափերում աւազի պէս զեղուած բազմագունեղ մանր, զարերով ալիքների զարնուածքից լոռված, կլորիկ, տափարակ, ձուաձեւ, անհուն խճերից առնում են մի-մի թաշկինակ կամ պարկ վաքը ու տանում են իրանց գիւղը կամ քաղաքը:

Աս իսկ իմակը գտնուելով նոյնպէս և ջրի տակ լճի ոչ խոր եղբերում՝ անսահման ժամանակների ընթացքում ջրի կազմող ուժով խառնուելով աւազի հետ և միաւորուելով՝ կրաւին ատոմներով՝ դարձել են խոշոր-խոշոր խալուաբէտ զանգուած—սալեր ու անպէս կարծր, որպիսին կարող է միան լառաջ բերել բնութիւնը. ազդ սալերն են խակապէս մի տեսակ բնական մօզափկա, որոնց փրձեցնելով ջրի լատակից՝ շերա-շերո գործ են ածում ուղիներ պողոսելու. սական եթէ դրանք լղկուէին կարող էին շատ գեղեցիկ, ամուր, խոնաւութեան շրթողնող խոցերի ու սենեակների լատակամած դառնալ:

Երփներանդ գոնաւոր քարերի կտորները ճաշակաւոր և կանոնաւոր ձևերով իրար իրիւրուելով՝ կազմելով որպէս մի

ամբողջ՝ կոչվում է մօղաիկա։ Այս իմ նամակն էլ գաճազան բաւական հետաքրքրական հատընտիրտեղեկութիւններից լորինելով, կազմեցի բանաւոր կամ գրական մօղաիկա, որ կրում է նամակիս խորագիրը։

Սեանը այցելող ուխտաւորների զիմաւոր գուարծութիւններից մէկն էլ՝ է կղզու շորջը պատել նաւակով, որ տեսում է կէս ժամ, եթէ արագ թիվավարուի, երբ հաւարկելով հասնում էք մինչև կղզու արեւելեան սեպացած ափի հանդէպ, նկատում էք ժայռերի ճակատի վերապի խոր փորուածներ, իսկ փոքրիկ կիրճերում խղճալի հիւզեր, դրանք վաղնջական միանձնների ճգնաբաններն են...»

Այս կղզու վրակ ամառը գտնվում են գորշ և սև վալենի բաղերի խումբեր, որոնք շարունակ լողալով լին երեսին, լանկարծ սլանում են կղզու կատարը. այդ բաղերից որսալու համար գալիս են Սեան Ծաղկացածորի ամարանոցը օդափոխութեան դուրս եկած հարուստ երիտասարդները. Յիշեալ բաղերի միաը մութ կարմիր, ուժեղ և անախորժ չէ։

Վերափոխման տօնի օրը հանդիպելով Սեանի մենաստանում, երբ սովորական կերպով ուխտաւորների մնջ բազմութիւն է լինում, ես նկատեցի հետեւեալ՝ ինչպէս երեսում է հին կուալաշտական սովորութիւնը կիների մէջ. սրանք մտնելով տաճարը ոչ թէ անքան խաչակիքում էին, որքան զոր ձեռնարով մատների ծագերը շրթունքներին կպցնելով համբույներ էին զիկում զէպի սեղանը, խաչերը, պատկերները և ալն. այդ մի տարօրինակ տպաւորութիւն էր անում մարդու վրաւ, որ չէր տեսմէ ազդպիսի մի բան։


Ուխտաւոր կիների այդ խուռներամ բազմութեան մէջ աչքի էին ընկնում այդ կողմերի գեղանի օրիտրդների պարանոցի և կրծքի մանեկաձև զարդերը. կիները կախում են ոսկի կամ արծաթի դրամների մի շարան, իսկ աղջիկներին վերապահուած է յատկապէս խաչ կրելու սովորութիւնը. նկատելին աչն է, որ օրիտրդների կրծքին կախած խաչերը շատ լաճախ

զարմանք էին պատճառում իրենց անսովոր մեծութեամբ, որը հաւասարում էին մի վարդապետական շքաղիր խաչի, որ կը ըրում են նրանք կրծքի վրաց։

Ի զէպ տեղորդ չը լինի վշել այն հանգամանքը թէ ինչպէս են մեծացնում և պահպանում աղջիկներին այդ գաւառում—Դեղաբրունիքում։ Նախ այս պէտք է ասել, որ այդ երկրում աղջիկներին ծախում են համարեա թէ և ոչ թէ մարդու են տալիս աճնպէս, ինչպէս ընդունուած է քրիստոնեակ աշխարհում. և բացարձակապէս աւելի գեղեցիկ աղջկակ համար, նրան ցանկացող փեսացուն աւելի է վճարում նրա հօրը (մինչեւ 300—400 ր.). աղդպիսով աղջկակ կամ վեսպուփ գիրքը, կարողութիւնը, նրանց համակրութիւնները և այն երկրորդական նշանակութիւն ունին. ի հարկէ այդ պարագան պատճառ է լինում չաճախ երիտասարդների դժբախտութեան և ընտանեկան փոթորիկների, որոնք մինչև իսկ վերջանում են սարսափելի ոճրագործութիւններով։ Չընակելով հոգեոր իշխանութեան ջրդրուներին, խրատներին և նդոլքներին անգամ, այդ բարբարոսական սովորութիւնը բռնա կերպով պահպանում է իր գոյութիւնը ժողովրդի թանձր տղիտութեան խաւարի չնորհիւ։ Գորովագութ մազը ի նկատի ունենալով որ իր աղջկակ բախտը կախուած է նրա գեղեցկութեան զնահատումից, ամեն ջանք գործ է դնում նրա գեղը աւելցնելու և վալեցնելու. ուստի կարելիին չափ աշխատում է նրան հանապազօրեակ մաքուր հաղցնելու, թույլ չին տալիս նրան տնաշին ծանր գործեր կատարելու, աղջիկները վակելում են աչքի զարնող աղատութիւն, վարում են զրօսանէր և ուրախ կեանք, մաքը ամենալին հոգացողութեամբ տան ամեն քաղցր և սնընդարար պաշարը անպատճառ ուտեցնում է աղջիկներին. սէր կարագ սպասողներն են այդ կողմերի հայ ընտանիքներում բացառապէս աղջիկները, որոնց պատմական «վափիկասուն» ածական տալը՝ աղդպիսով բոլորովին իրաւացի է։

Սեանի ափերում կան շատ գիւղեր, բաց ճիփ վրաւ նաւազնա-

ցութեամբ ամբողջապէս պարապում են Նորագուսցիք և մասմբ Ղշարցիք: Նորագուս բաւական մեծ հայաբնակ, սական աղքատ գիւղ է. մէջը կանգնած է խիստ բարձրաշխ մի վիթխարի կոփոծոք քարերից կառուցուած ութ հարլւր տարուաց եկեղեցի, որի կամարները թէպէտ փլուած են, բայց տախտակամածով կարկասուելով՝ ծառալում է ժողովրդին որպէս աղօթատեղի: Եկեղեցու հարաւային պատի վրայ անխախտ մնում է մինչև հիմա մի արևի կամ արեգակնային ժամացուց. դա է մի քառորդ արշինաչափ երկաթէ ծողիկ ամրացրած մի սալ քարի վրայ ուղղահանեաց, մի կիսաշրջանի եկարոնում, որ բաժանուած է շառաւելզներով տասներկու մասի և ամեն մասում փորագրուած է Ա, Բ, մինչև Գ.Բ. — 1—12:



Նորագուսի եկեղեցու հարաւային պատի վրայ գտնուած արեգակնային ժամացուցիքի պատկերը:

հութիւնները հոգեոր իշխանութիւնը:

Այս գիւղոց գէպի հարաւ մի վերստ հեռաւորութեամբ դաշտի մէջ կանգուն անարատ կենումէ մի հին հիանալի, խիստ փոքրիկ, գողարիկ, անսիսն, սուր զմբեթաւոր եկեղեցի Ս. Գ. Լուսաւորչի անունով, որի ներսը պատկերի վրայ կան շատ ար-

ձանագրութիւններ անտխեղծ և շատ պարզ ընթանլի և պատմական տէսակէտից շատ հետաքրքրական: Լուսաւորչի երեք տօներին ժողովուրդը ուխտի է գալիս ալստեղ:

Նաւակները պատրաստում են նոյն իսկ Նորագուսիք և առաւելապէս Ղշարցիք. այդ նաւակները ունին միան մի կազմ, որից քամի եղած ժամանակ կախում են առագաստը, որով առանց թիավարելու չուում է նաւակը: Նորագուսը գտընվում է լճի հարաւային ափում. նրա դէմուդէմ, արևելեան ափում, գտնվում է Շորժա ռուս աւանը. Նորագուսի և Շորժայի մէջը եղած տարածութիւնն է լճի ամենանեղ տեղը՝ տասը վերստ, որը կարում են նաւակները երեք ժամուայ ընթաց. քում: Գրեթէ ամենազն օր կանոնաւորապէս Նորագուսից մի նաւակ է դրւս գալիս տեղափոխութիւնն համար առաւօտեան 7 ժամին դէպի ծօրժա: Իսկ լճի զանազան կէտերից մթերենների տեղափոխութիւնն համար Նորագուսիք նաւագնացութիւնը մկանում են սեպտեմբերից մինչև մայիս: Լճի երկարութիւնով մի ծալրից մինչև միւսը (70 վերսա) ապրանքներ կրելու համար մի խալվարին առնում են երկու րուրլի: Ամբողջ գաւառում Նորագուսիք լայննի են, որպէս լճի վրայի նաւագնացութիւնն սիրահարներ. ջուրը, ինչպէս լայննի է, միշտ գըրաւիչ է եղել մարդկանց համար, չընալած այն բազմաթիւ դժբաղս արկածներին, որ պատահում են նրա վրա:

Գեղամաւ լճի ափերում կան չորս ռուսաբնակ գիւղեր, որոնք իմիջի ալուց ընդարձակ չափով պարապում են սագապահնութեամբ. ալուսեղ ճանապարհորդելիս ուղենորը նկատում է սագերի բազմաթիւ երամներ, որոնք չարան. չարան արածում են լճի եղբերում հսկողութեամբ մանուկների կամ ծերունիների. հայ գիւղերից միան Օրտակլուն սակաւ պահում է սագերի ջուկեր:

Այս կողմերում, մանաւանդ մօտակա Ծորոփիրի (Ղաղախ) գաւառում, բարձր ժայռերի և բլուրների կատարեների վրայ տեղտեղ կան կիսաւեր ամայի աշտարակներ, որոնց Ծորոփիրի

զիւղացիները անուանում են դիտեան. այդ բառի բացատրութիւնը, ինչպէս անում է այժմ ժողովուրդը հարցասէրին մի և նոյն է դուրս գալիս, եթէ ասէինք ուազմական դիտանոց, որ ազգային համանիշ է դիտեան գեղեցիկ բառին, որ իր դուրթիւնը պահպանել է ժողովրդի բերանում:



Վ Ե Ր Զ




ԱՐԵՎԻ ՎԱԶԱՐԱՆՈՑՈՒՄ ԾԱԽԻՌԻՄ ԵՆ

ՄԵՐ ՀԵՏԵՒԵԱ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ


թ. կ.

«Եղիշեր» 1883, 1885, 1886 և 1888 թ. (սակաւաթիւն)	25 —
» 1884 և 1887 թ.	3 —
№ 1. Փայտաշն Խրճիթից՝ սպիտակ տունը, պատկեր.	» 60
» 2. Հակակ մրջին (պատկերազարդ)	» 40
» 3. Ժան Բատիստ Լիւլիի մանկաթիւնը.	» 10
» 4. Ռոկի Ֆլուլի	» 30
» 5. » II սերիա.	» 5
» 6. Մշակուած և անմշակ ծառի կեանքը.	» 30
» 7. Չարաճճի Արամի արկածները (38 պատկերով),	» 50
» 8. Ֆրիտօֆ Ղիւցազն (պատկերազարդ),	» 40
» 9. Եր. Տէր-Աւետիքեան. Քնար խոնակ.	» 50
» 10. Պօղնանի տառեցչի օրագրից.	» 20
» 11. Ալֆոնս Գուլէ. Երկու մանրապինդ.	» 15
» 12. Անդերսէն. Ասիսակ և Խողարած.	» 20
» 13. Գիկէնս. Հարս և Ոլեսուք.	» 15
» 14. Կ. Մելիք-Շահնազարհամբ. Արլոցե Արեանց պընը վէշակը (Ամրաբազի բառբառով, զի՞նը 20 կ. սակաւաթիւ),	» 50
» 15. Գ. Ազականց. Արեգնազան.	» 40
» 16. » 8օրք Անգեղ և Հականուշ զեղեցիկ.	» 40
» 17. Ա. Եղիկեան. Հաշակ (ընափր բանասեղծ),	» 25
» 18. Տիգո. Գալի աղաթներան պատկերներ «Ճր ողարքան քոլան կարի»,	1 —
» 19. Եր. Տէր-Աւետիքեան. Տեղագրական նամականի.	» 30
» 20. Պատկերազարդ օրացոց 1889 թ.	» 30
» 21. Փորբաղիր օրացոց 1889 թ.	» 10

Դիմ. Տիֆլիս. Ռедакցիա յանալա «ԱԲՍԻՕՐ»



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



7448

0003600

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003600

